Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

1
2009

Հայկական Կովկաս

Կովկաս. Նվաճման բանալին

Վրաց-ռուսական տեղեկատվական պատերազմը եւ Հայաստանը

ական ինքնագիտակցության գարգացման

Գիտակրթական հիմնադրամ

Հայկական Կովկաս

Հոդվածների ժողովածու

Երևան 2009

«Պետական ինքնագիտակցության զարգացման» գիտակրթական հիմնադրամն սկսում է «Հայկական Կովկաս» հանդեսի տպագրությունը: Այսուհետ հիմնականում զետեղվելու են Հայաստանի Հանրապետության և մեր տարածաշրջանի քաղաքական գործընթացները լուսաբանող և վերլուծող հոդվածներ: «Հայկական Կովկասը» նախատեսված է հասարակական գիտություններով զբաղվող հետազոտողների, ուսանողների, ինչպես նաև ընթերցասերների լայն հասարակության համար:

Բովանդակություն

Է. Աբրահամյան ---------- 5

Կովկաս Նվաճման բանալին

Հ. Մելիք-Շահնազարյան ---------- 28

Ռուսաստանի Դաշնության տարածաշրջանային քաղաքականությունը և ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը

Վ. Սարգսյան ---------- 38

Վրաց-օսական հետպատերազմյան շրջանում Սամցխե-Ջավախք-Ծալկայի քաղաքական ազդեցությունը տարածաշրջանի և Հայաստանի Հանրապետության վրա

Ն. Հոխիկյան ---------- 60

Հայ-թուրքական հարաբերությունների լուսաբանումը Հայաստանի և Թուրքիայի լրատվամիջոցներում

Վ. Միրաքյան ---------- 69

Վրաց-ռուսական տնտեսական պատերազմը և Հայաստանը

ԿՈՎԿԱՍ՝ ՆՎԱՃՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ

Էդուարդ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2008 թվականի օգոստոսյան իրադարձություններից հետո համաշխարհային քաղաքագետներն ու վերլուծաբանները տարբեր փաստերի ու կանխատեսումների վրա հիմնվելով սկսեցին ավելի հաճախ խոսել Արևմուտքի հակառուսական բլոկի հետ ունեցած ռազմաքաղաքական հակասությունների նոր ալիքի մասին Թեժ օգոստոսը դարձավ աշխարհում ռազմա-քաղաքական նոր փոփոխությունների սկիզբ, որտեղ նոր խաղի հիմնական թատերաբեմը, ինչքան էլ որ զարմանալի չթվա, դարձավ Կովկասը

Հարյուրամյակներ շարունակ այս շրջանը ռազմա-քաղաքական կարևորագույն գործընթացների սուբյեկտ է հանդիսացել ոչ միայն հարևան գերտերությունների, այլև եվրոպական առաջադեմ պետությունների համար Կովկասը, իր աշխարհաքաղաքական և էթնո-դավանաբանական բազմազա-նության և բազմաշերտության պատճառով շատ հաճախ իրեն գրված այս կամ այն տերությունների ձեռքում դարձել է ռազմաքաղաքաղաքական փորձարկումների գործիք

Տեղական՝ արմատական, պետական կազմավորումների ստեղծմամբ հարևան և համաշխարհային տերությունների կովկասա-սնծովյան արտաքին քաղաքականության ուղղվածու-թյան մեջ փոխվեցին միայն մեթոդները, բայց ոչ միանշանակ Կովկասում վերահսկելի քաղաքական և տնտեսական նպատակ ստեղծելու գլոբալ նպատակները Կովկասյան տարածաշրջանը գործնականորեն միշտ էլ եղել է կարևորագույն հենակետ, ինչպես Ասիայի և Հյուսիսի խորքերը թափանցելու համար այն պես էլ այսօր այն համարվում է հիմնական և ապահով դարպ

պաս՝ դեպի Եվրոպա և Միջերկրյածովյան ավազան Հենց այս գործոնն էլ արդեն երկար տարիներ որոշում է կովկասյան տարածաշրջանի նշանակությունը, որը հանդիսանում է ոչ միայն յուրատեսակ պլան տարբեր պետությունների քաղաքական ամբիցիաներին դիմակայելու համար այլև երկար դարերն ի վեր իրար դեմ հակամարտող կովկասյան ժողովուրդների համար դարձել է էթնո-գաղափարաբանական կոլլասպների ասպարեզ

Համաշխարհային և տարածաշրջանային պետությունների ռազմաքաղաքական և էթնո-գաղափարաբանական դիմակայումների օբյեկտները պայմանականորեն կարելի է անվանել «բանալիներ» կամ «կետեր», որոնց նկատմամբ հսկողությունը երևան է հանում այս կամ այն պետության ֆավորիտությունը Կովկասում նման կետեր կարող են հանդիսանալ նավահանգիստները, լեռնաշղթաները, գետերը, տնտեսա-փոխանցա-էներգետիկ ուղիները և հաղորդակցման միջոցները, որոնց հսկողությունը որոշում է այն պետության քաղաքական գործոնի աստիճանը, որը ղեկավարում է նմանատիպ «կետը» կամ փորձում է հեռանկարում հասնել դրան

Եթե Հարավային Օսեթիայի օգոստոսյան հակամարտությունը դիտարկենք այս տեսանկյունից ապա կարելի է այս տարածաշրջանում նկատել միանգամից մի քանի պետությունների ակտիվացում որոնք, մինչ հակամարտությունը անխոս, ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում տարածաշրջանում իրենց ազդեցության ուժեղացման գործում, սակայն Սահակաշվիլու խարդավանքը դարձավ այսպես կոչված սևծովյան տարածաշրջանում խաղի կանոնների փոփոխությունների սկզբի արդյունք Պետք է նշել, որ մինչև Հյուսիսային Օսեթիայի պատերազմը, տարածշրջանում ընդհանուր առմամբ գործում էր կարգավորված արտաքին քաղաքական իրավիճակ՝ կովկասյան երեք հանրապետությունների բազմավեկտորության ֆոնի վրա Այս իրավիճակը, որը տիրում էր մինչև 2008 թվականը, ձևավորվեց անմիջապես փլուզված ԽՍՀՄ-ի տարածքում ծայր առած էթնիկական կոնֆլիկտներից հետո Արևմտա-

յուրաքանչյուր «խաղացողների» ջանքերը ՌԴ հարավում էթնոդավանաբանական կոնֆլիկտների գարգացման ճանապարհով Կովկասի աշխարհաքաղաքական բարոմետրից Մոսկվայի ամբողջական դուրսբերման գործում մասնակից անհաջողության, որն էլ դարձավ տարածաշրջանում կայունության և ազդեցությունների շրջանների կայունության պատճառ

Որպեսզի հիմնավորապես հասկանանք տարբեր պետությունների յուրօրինակ դերը Կովկասում տեղի ունեցող տարածաքաղաքական գործընթացների շարունակականության մեջ անհրաժեշտ է հայացք նետել ոչ վաղ անցյալի վրա հասկանալու համար ապագայի գործընթացները

Իր գոյության ողջ ընթացքում Վրաստանի նկարագրյալ տարածքը խոշոր տերությունների քաղաքականության մեջ միշտապես եղել է հենադաշտ՝ Միջին Ասիայում և Մերձավոր Արևելքում արտաքին քաղաքականության տարածման գործում

Այսօր բոլոր ռազմաքաղաքական բլոկները՝ մասնավորապես, ամերիկա-բրիտանական ալյանսը, Թուրքիան, Ռուսաստանը և անգամ Իրանը, առանց բացառության, մինչև օգոստոսյան իրադարձությունները, մեծ ցանկություն ունեին հզորացնել իրենց ռազմաքաղաքական ազդեցությունը հենց Վրաստանի տարածքում, քանի որ ռուսների դուրսբերումը մեծապես ազդեց տարաշրջանում ռուսական ներկայության բացառիկությա վրա դրանով իսկ ստեղծելով վակուում Ռազմաքաղաքական վակուումը զգուշորեն փորձում էր լրացնել ինչպես Արևմուտքը, այնպվես էլ Թուրքիան, սակայն Ռուսաստանի ուղղակի փորձը վերականգնել իր անմիջական ներկայությունը կովկասյան Սև ծովում, 58-րդ բանակի զորամասերի՝ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի սահմաններ տեղաբաշխելու ճանապարհով Կովկասի համար հիմնական «խաղացողների» կողմից ընդունվեց որպես թեժ և բաց կոնֆրոնտացիայի սահմանում Այլ խոսքերով ասած՝ Ռուսաստանի կողմից Կովկասում այսպես կոչված խաղի կանոնների խախտումը Թբիլիսիի անհնազանդ

գործողությունների պատճառով հանգեցրեց տարածաշրջանի արտաքին քաղաքական գործողությունների ֆոնի փոփոխության, որտեղ հիմնական հաշվով, դանդաղ, բայց հիմնավորապես փորձեց լեգիտիմացնել իր ռազմաքաղաքական ներկայությունը Վրաստանում՝ դա արդարացնելով վերջինիս նկատմամբ Ռուսաստանի ագրեսիվ դիրքորոշմամբ

Հենց սրանից էլ ելնելով՝ Անկարան, որը միշտ էլ ծայրահեղ բացասական է ընդունել Կովկասում իր հետ չհամաձայնեցրած ցանկացած քայլ Արևմուտքի կողմից, Հարավային Օսեթիայում Ռուսաստանի առաջին իսկ ակտիվ գործողություններից սկսած, մշակեց իր ծրագիրը Կովկասում իր ռազմաքաղաքական ազդեցության կտրուկ ընդլայնման համար՝ առաջին հայացքից հաշվեկշռված և համաձայնեցված հենց Մոսկվայի հետ այլ ոչ թե իր ավանդական գործընկերոջ՝ ԱՄՆ-ի հետ

Բանը նրանում է, որ Սև ծովում ամերիկյան ուղղակի ներկայությունը մի շարք խնդիրներ է ստեղծում Անկարայի համար՝ սեփական ծրագրերի իրականացման հարցում ԽՍՀՄ փլուզման սկզբնավորման հետ Թուրքիան սկսեց դրույթներ և բազմաբնույթ սցենարներ մշակել իր ռազմական և քաղաքական ազդեցությունը Սև Ծովի առափնյա մասերում և Կովկասում ուժեղացնելու նպատակով 1990-ականներին Վաշինգտոնում Թուրքիան ընդունվում էր որպես միակ հուսալի ռազմական ուժ որն այնքան մոտ էր հարավից, որը չնայած Անկարայի անընդհատ մեծացող ամբիցիաներին և Կովկասում ու Սև ծովում թուրքական քաղաքականության աստիճանական ինքնուրույնության, ուներ ամենահնարավոր հեռանկարներն ու ռեսուրսները՝ հետխորհրդային վակուումային տարածքները ղեկավարելու համար

Լեռնային Ղարաբաղում հայ-ադրբեջանական հակամարտության և Երևանի նկատմամբ թուրքական հանրահայտ շրջափակումային քաղաքականության պատճառով միայն Վրաստանը, թուրքերի աչքերին թվում էրԱնկարայի միակ՝

ուղղակի դյուրին և երկարաժամկետ ճանապարհը դեպի Տուվկաս Ելնելով նրանից որ հենց Պրուսիայի տարածքում էին գտնվում տարածաշրջանում ազդեցության կարևորագույն օջախները կամ վերոնշյալ «կենտրոն» որոնցից Մին Կովկասում կարևորագույն նավահանգիստ Բաթումին Անկարան միանգամից սկսեց իրականացնել զուգահեռ ռազմաքաղաքական և հասարակական-տնտեսական նախագծեր ստրուծաշրջանում այն ժամանակ համատեղ արևմտա-թուրքական ազդեցության ներգրացման ուղղությամբ

Արևմտյան պետությունների ղեկավարությունների ակտիվ գործունեության արդյունքում ստեղծվեցին ազդեցության իրական քաղաքական և տնտեսական օջախներ, իսկ Թուրքիայում աստիճանաբար սկսեց գործողության մեջ դրվել և զարգանալ պետական պանթուրանիզմի տեսությունը

Հիմնվելով Անկարայի՝ «ներքին լճի»՝ այսինքն Սև ծովի առափնյա տարածքում ունեցած նախկին հզորության և ազդեցության վերահաստատման գաղափարի վրա և տեսնելով «օգնության կարիք զգացող թուրք-մուսուլմանական» կովկասյան ժողովուրդների քաղաքական խնամակալության ակտիվացումը՝ թուրքական համապատասխան կառույցները սկսեցին մշակել երկարաժամկետ հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային և անգամ մարդասիրական ծրագրեր Ղրիմում թաթար-ղրիմական գործոնի ակտիվացումը, Մոլդովայում գագաուզների հզորացումն ու փաստական ինքնավարության ձեռք բերումը, կոսովյան ալբանացիների համակողմանի աջակցությունը և բոսնիական պետության հզորացումը, Դաղստանում կումիկ-ադրբեջանական կոնսոլիդացիան և ակտիվ հասարական-քաղաքական նյութները կարելի է համարել սևծովյան տարածաշրջանում թուրքական գործոնի ամենուրեքության ակտիվ գործունեության հզորացման փայլուն արդյունք

Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև միշտ էլ եղել են հակասություններ, հատկապես Իրաքի հետագա ճակատագրի հարցում, մասնավորապես Քուրդիստանի հարցում Ավելին, Թուրքիան, մշտապես պայքարելով Իրանի հետ տարածաշրջանային քաղաքականության մեջ, չէր կիսում ԱՄՆ-ի նման կտրուկ դիրքորոշումը Թեհրանի հարցում Հարավային Օսեթիայում պատերազմից հետո Անկարան հստակ դիրքորոշում որդեգրեց իր կովկասյան քաղաքականության մեջ և հասկացրեց Արևմուտքին, որ նա Թուրքիայից, Ռուսաստանից և Իրանից բացի չի հանդուրժի ավելորդ և առանձին խաղացողի ներկայություն Ավելին, Անկարան հստակ գիտակցեց, որ Վրաստանի արտաքին քաղաքականության գործոնի ուժեղացմամբ որպես Արևելքում արևմտյան հենադաշտ, Թուրքիայի քաղաքական և աշխարհագրական նշանակությունը կտրուկ իջնում է և այդ ժամանակ, Անկարայի «քմահաճույքներին» ի հակառակ, Արևմուտքում որպես այլընտրանք կլինի «անդեմ» և թույլ Վրաստանը Բացի այդ, օգոստոսի 10-ին Էրդոհանի կատարած այցը Մոսկվա և տարածաշրջանում կայունության և անվտանգության առաջարկած նոր ձևը «Կովկասյան պլատֆորմ» անունով, ցույց տվեց Ռուսաստանի նկատմամբ թուրքական գործողությունների նախնական պատրաստվածությունն ու հաշվարկվածությունը

Մոսկվան էլ իր հերթին ,նախօրոք պատրաստվելով հարմար պահին «պատժել» Վրաստանին, տարածաշրջանի հետագա կառուցման գործում փնտրում էր գործընկեր ի դեմս Թուրքիայի Գիտակցելով Թուրքիայի հետ համագործակցության կարճատևությունն ու անհուսալիությունը Մոսկվան փորձեց լուծել տվյալ պահի ամենակարևոր խնդիրը՝ ամբողջությամբ դուրս թողնել Արևմուտքին՝ Բոսֆորի և Դարդանելի նեղուցներում նավերի մշտական ուշացումներով Այլ կերպ ասած այն ժամանակ, երբ Թուրքիան և Ռուսաստանը Սև ծովում միասնաբար պահում էին իրար, որի հետևանքով ծովում ուժերի յուրատեսակ, հաշվեկշիռը խաղաղ էր, ապա հիմա, երբ դեպի

Վրաստանի ափերն են շարժվում ամերիկա-բրիտանական նավերը,սա նյարդայնացնում էր ոչ միայն Ռուսաստանին,որը խնդիրներ ուներ Ուկրաինայի հետ Սևաստոպոլում ՍՄՓ-ի բազաների վերաբերյալ, այլև Թուրքիային, որն այս դեպքում ծովում իր գործողությունների համար պետք է հաշվեմտու լիներ և հավանություն ստանար ԱՄՆ-ից և նրանց դաշնակիցներից

Հենց այս հիմնական պատճառներն էլ ստիպեցին Թուրքիային աջակցել Վրաստանի հարցում Ռուսաստանի գործողություններին, չնայած այն բանին, որ նա միշտ էլ ամենաակտիվ մասնակցությունն էր ցուցաբերում վրացական բանակի տարմտական սպառազինման և ուսուցման գործում

Բացի Մոսկվայի աջակցությունից, Անկարան կտրուկ ակտիվացրեց իր արտաքին քաղաքական գերատեսչությունը կովկասյան ուղղվածության մեջ, որպեսզի նոր իրավիճակում առավելագույնս ստանա սկզբնական արդյունավետ դիրքեր Կովկասում իր ազդեցության ամրապնդման գործում Կովկասը, որպես էթնոքաղաքական տարածաշրջան, Սև ծովում ունի երեք խոշոր նավահանգիստ Սուխումը, Փոթին և Բաթումը Նավահանգիստներ, որոնք ապահովում են կովկասյան տարածաշրջանին դեպի արտաքին աշխարհ ծովային ելքով Սուխումը, Փոթին և Բաթումն էլ հենց հանդիսանում են կովկասյան տարածաշրջանում գերակայելու «կետերից» կամ «բանալիներից» մեկը Ճակատագրի հեգնանքով՝ այդ կետերը գտնվել են, իսկ մի մասն էլ մինչ այժմ գտնվում են Վրաստանի տարածքում Եթե ուշադիր ուսումնասիրենք այս երեք կետերի պատմությունը,ապա կարելի է եզրակացնել, որ նրանք, մասնավորապես Սուխումը և Բաթումին, միշտ հանդիսացել են Թուրքիայի և Մոսկվայի դիմակայության օբյեկտ Աբխազական պետականության կառուցումից հետո և առ այսօր, չնայած այն բանին, որ Սուխումը ամբողջովին գտնվում է Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցության տակ, Անկարան մշտապես փորձում է ուժեղացնել իր ազդեցության գործոնը այս փոքր, ճանաչված պետության հարցում Թուրքիայի արտգինության

համայնքի ակտիվ գործունեության միջոցով Աբազինները Աբխազիայում զբաղվում են տնտեսական ներդրումներով, փորձում են ակտիվորեն մտնել հասարակական-քաղաքական կյանք, մասամբ ֆինանսավորում են աբխազական ազգային տարբեր կազմակերպություններ, ինչով էլ լարում են հանրապետության հայերի և աբխազների հարաբերությունները Չնայած թուրքական ազդեցության արդյունավետ զարգացմանը, Անկարան, թվում է, այդպես համակերպվել է Աբխազիայի ժամանակավոր կորստի հետ

Քիչ այլ քաղաքական իրավիճակում է գտնվում Բաթումը Կովկասի կարևորագույն նավահանգիստը որի շուրջ արդեն մոտ տասնհինգ տարի յնթատում է անտանանելի բայց հիմնարար քաղաքա-տնտեսական պայքար տարածաշրջանի միանգամից մի քանի պետությունների մեջ

Փաստորեն վիճակին պետության քաղաքական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով որ այս երկիրը հանդիսանում է Կովկասում գերակայելու բանալի այնպիսի տերությունների ձեռքում ինչպիսիք են Ռուսաստանը, Թուրքիան, ԱՄՆ-ը Մանրամասն վիճակը տարածաշրջանային տերությունները չեն, որ Վրաստանին կոչում ասած ընդունում որպես գերակայության հիմնական գործիք Դանդ Նշանակում է, որ Վրաստանի հարևանները Հայաստանը և հատկապես Ադրբեջանը, նույնպես հետաքրքրված են այս պետության մեջ իրենց տնտեսաքաղաքական և ազգային գործոնների ուժեղացմամբ

Բացի նավահանգիստներից, որպես նվաճման բանալի կարելի է համարել այն, որ Վրաստանը հյուսիսից սահմանակից է ռուսական Հյուսիսային Կովկասի հետ, որը մշտապես գտնվում է էթնո-կրոնական լարվածության մեջ, ինչն էլ սահուն կերպով կարող է օգտագործվել հենց Ռուսաստանի դեմ Նման փորձ Թուրքիան արդեն ունի, եթե հիշենք 19-րդ դարում տեղի ունեցած Իմամ Շամիլի ապստամբությունը, հետո՝ 1917-25թթ

տարտությունը, Չեչեն-Ինգուշեթիայի և Դաղստանի 1936-44թթ. հակառուսական ելույթները, և վերջապես,դուդաև-վախխաբիթյան Չեչենիան Թուրքիայի և արևմտյան գործընկերների ակտիվ և երկարատև ջանքերի արդյունքները

Ինչպես անվստահության մթնոլորտին և Կովկասում գլոբալ էթնո-քաղաքական խնդիրներին Թուրքիան և Ռուսաստանը հիմա իրենց համար լուծում են առաջնահերթ խնդիրը Ռուսաստանը, ի դեմս Թուրքիայի ունենում է ուժեղ թիկունք և Արևմուտքին տարածաշրջանից դուրս մղելու գործիք իսկ Թուրքիան, Ռուսաստանի գործողությունների շնորհիվ Մոսկվայի համաձայնությամբ սկսում է ակտիվ դեր ունենալ տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովման համար Այլ կերպ ասած՝ Մոսկվան և Անկարան ցույց են տալիս ամբողջ աշխարհին, որ կովկասյան խնդիրները նեղ տարածաշրջանային խնդիրներ են և դրանք պետք է լուծվեն միայն տարածաշրջանային տերությունների կողմից, ինչպիսիք են Ռուսաստանը և Թուրքիան

Հատկանշական է, որ Թուրքիայի այսպես կոչված Կովկասում կայունության և անվտանգության հաստատման և ապահովման գործում ունեցած նախաձեռնություններում Իրանը որպես տարածաշրջանային երրորդ պետություն, ի սպառ բացակայում է Իրանի միտումնավոր մեկուսացումը կովկասյան հարցերի լուծման գործից, հնարավոր է, որ կապված լինի թուրք-ռուսական համաձայնության հետ՝ կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ Հիմնվելով պաշտոնական Թեհրանի հետագա քայլերի վրա չի կարելի ասել, որ նա հիացած է Թուրքիայի և Մոսկվայի նախաձեռնություններից, քանի որ Իրանի հյուսիսային սահմաններում ղարաբաղյան հարցի համատեղ լուծումների ժամանակ հաշվի չեն առնվել իսլամական պետության շահերը

Իրանը միշտ էլ անհագստացած է եղել ինչպես մի քանի արևմտյան, այնպես էլ հիմա արդեն թուրքական քաղաքական

ուժերի փորձերից՝ հնարավորինս արագ լուծել ղարաբաղյան հարցը Գիտակցելով, որ գոյություն ունի ղարաբաղյան հարցի լուծման երկու տարբերակ հայկական կողմից գրավված տարածքների հանձնում, այսինքն, իրանա-ադրբեջանական սահմանների ընդլայնում, կամ էլ՝ հարցի վերջնական սառեցում, որն ավելի ձեռնտու կլիներ Թեհրանին քան առաջին տարբերակը Առաջին տարբերակը այն է ղարաբաղյան հարցի լուծման ադրբեջանամետ տարբերակը, առաջիկայում էթնո-քաղաքական ասպարեզում Իրանի համար կստեղծեր մի շարք խնդիրներ Այլ խոսքերով ասած պետության հյուսիսում ադրբեջանալեզու քաղաքացիների շրջանում անջատողական տրամադրությունների առաջացման յուրաք խնդիր է առաջ գալիս՝ ադրբեջանական պետության հայրենասիրի հետևանքով Երբ հայկական կողմը թույլ չտա պրվող ստորագրության դիմաց կսկսի հանձնել որոշակի տարածքներ, դա լրացուցիչ խթան կհանդիսանա Իրանի ազգաբնակչության համար սեփական ինքնագիտակցության ամրապնդման գործում, որը կհանգեցնի իրանական պետության համար անդառնալի հետևանքների Հենց այս դիրքերից նայելով էլ լինելու է ինչպես նաև գիտակցելով հայկական դեկավար շրջանակների յուրահատկությունն ու անհեռատեսությունը, Իրանը Թուրքիայի ակտիվացումից սկսեց նկատելիորեն անհանգստանալ

Պատմության ողջ ընթացքում ղարաբաղյան շրջանը, հատկապես իրանական պետության համար միշտ հանդիսացել է կարևոր գործոն կովկասյան տան ժողովուրդների հպատակեցման գործում Ղարաբաղը ունենալով բավականին բարդ աշխարհագրական առանձնահատկություններ և գերակշռելով Արաքս և Քուր գետաբերանների մոտ, այսօր էլ հանդիսանում է Կովկասում այս կամ այն պետության ազդեցության հիմնական «բանալիներից» մեկը Իրանական տեսանկյունից, հնարավոր է, ղարաբաղյան հարցի լուծման ամենաշահավետ տարբերակը իսլամական պետության համար հանդիսանում է ստատուս-

թյոն, այսինքն,ԼՂՀ ներկայիս սահմանները և նրա իրական, դե-
ֆակտո անորոշ կարգավիճակը

Իրանի նման դիրքորոշման պատճառը, նախ և առաջ, հանդիսանում է Ղարաբաղի վերոնշյալ ռազմաքաղաքական գործոնը որպես Կովկասում գերիշխանություն ստեղծելու կարևորագույն օջախ Հենց այս պատճառով էլ Իրանը ակնհայտորեն անհագստանում է, երբ մարած թվացող ղարաբաղյան հակամարտության հարցով բոլորի համար հանկարծակի ցանկանում է զբաղվել Արևմուտքը, իսկ հիմա էլ՝ Ռուսաստանը Անկարայի հետ Ստեղծված իրավիճակում Թեհրանին ավելի հեշտ է ընտրել Հայաստանին, որը ղեկավարում է ղարաբաղյան բանալին քան Ադրբեջանին՝ պոտենցիալ հակառակորդին կամ էլ թե չէ տարածաշրջանային գերտերությանը Մոտակա և ավելի ուշ հեռանկարներում Հայաստանի իշխանությունը Ղարաբաղի նկատմամբ և դրա լիակատար ամրագրումը այլընտրանքային երաշխիքներ են ստեղծում այն բանի համար, որ Հայաստանը դեռ խաղացող է և այն էլ՝Իրանի համար ավելի քան կանխատեսելի Հենց սա էլ պատճառ դարձավ Անկարայի և Մոսկվայի կողմից ինչպես Արևմուտքի, այնպես էլ ատաջին հերթին Իրանի դուրս մղմանը կովկասյան ոչ արտաքին քաղաքական կազմավորումներից Վերլուծելով Իրանի վերջին մի քանի ամիսների գործողությունները, կարելի է նաև եզրակացնել, որ Թեհրանը, այսօր ունենալով տարբեր տեսական և ազգային խնդիրներ, կարող է սահմանափակվել միայն քաղաքական հայտարարություններով և որն ավելի մտահոգավոր է,քանի որ Կովկասում նախաձեռնողի պատրանք է ստեղծելում Չէ՞ որ չի կարելի մոռանալ նաև այն փաստը, որ Մոսկվան Անկարայի հետ համատեղ, փաստորեն փորձում է ցույցացնել Իրանի գլխավոր հակառակորդ ԱՄՆ-ի ազդեցությունը

Սակայն, որ Հայաստանի համար էլ իր կանխատեսելիությունը, իսկ ավելի կոնկրետ, տարածաշրջանային նախաձեռնող չլինելն ու չեզոքությունը խորապես կործանարար են և, ի վերջո, ինչպես

տեսնում ենք, Ղարաբաղի հարցում արտաքին քաղաքական նահանջը, ինչպես նաև տարածքային միակողմանի զիջումների գնալու համաձայնությունը կարող է հանգեցնել անգամ պետականության կորստի

Բաքվում սկսում են աստիճանաբար հասկանալ Ղարաբաղի կարևորությունը որպես Կովկասում գերակայելու ռազմա-քաղաքական գործոն Բաքվում վստահ են, որ ինչ զիջումների էլ Հայաստանը գնա, Ադրբեջանը պարտադրաբար փորձելու է ստանալ հակամարտությունը վերսկսելու ֆորմալ առիթներ իր հաղթանակում միանշանակ վստահ լինելու դեպքում Ավելին, ադրբեջանական ղեկավարությունը ստիպված է Վրաստանում սեփական ճնշումները իրականացնելու համար օջախների ստեղծման և Գեորգիայի նվաճման բանալիներին տիրելու հնարավոր հոխորտանքների կարևորությունը, որոնք տվյալ պահին Վրաստանի տարածքում են Այլ կերպ ասած վերջին մի քանի տարիների ընթացքում պաշտոնական Ադրբեջանը Թուրքիայի հետ զուգահեռ, իրականացնում է յայնածավալ էթնո-տնտեսական քաղաքականություն Վրաստանի տարածքում համաթուրքական ծրագրերի ամրապնդման և զարգացման համար Վրաստանում ադրբեջանա-թուրքական ակտիվության հիմնական թատերաբեմ են հանդիսանում Աջարիան, Քվեմո-Քարթլին,Կախեթիան, և 2007 թվականից սկսած նաև հայաբնակ Սամցխե-Ջավախքը

Ադրբեջանը, վերջին տասնհինգ և ավելի տարիների ընթացքում փորձում է ուժեղացնել իր ազդեցությունը կովկասյան տարածաշրջանում՝ Հայաստանի քաղաքա-տնտեսական առաջընթացի համար ստեղծելով ամենահնա-րավոր խնդիրները և, վերջնական հաշվով, փորձելով իր լիակատար ազդեցության տակ առնել պաշտոնական Երևանի՝ հիմնական առավել մեծ նշանակություն ունեցող առևտրական զարկերակները Ադրբեջանի ղեկավարությունը իր առաջ խնդիր է դրել ակտիվացնել իր քաղաքա-տնտեսական, իսկ 2007 թ -ի հունվարից սկսած նաև էթնո-կրոնական գործունեությունը

Աջարիայում (Բաթումի նավահանգիստ) և Գուրիայում՝ (Փոթի նավահանգիստ) արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսական կապերը լիարժեք վերահսկելու համար Ավելին, Սամցխե-Ջավախքում և Աջարիայում թուրքական գործոնի ուստիճանական զարգացման համար 2008թ -ի սեպտեմբերից սկսած, Վրաստանի թուրքական հասարակական-բարեգործական կազմակերպությունները սկսեցին Ադիգենի շրջանի մուսուլմանների և Ախալցխայում թուրք-մեսխեթցի հետագա վերաբնակների համար Ջավախքում մզկիթների զանգվածային կառուցման ֆինանսավորում

Մասնավորապես, Ախալցխա քաղաքում թուրք-վրացական մի կազմակերպություն ծրագրում է ավելի քան յոթանասուն տների ձեռքբերում մեսխեթցի թուրք վերաբնակների համար Միաժամանակ,ադրբեջանական գործարարները իրենց համար տնտեսական հիմք են ստեղծում՝ Ադիգենի շրջանում 2009 թ -ից սկսած կգործի մրգերի վերամշակման գործարան, իսկ Ախալցխայում ադրբեջանական գործարարները ծրագրում են բացել մսամշակման արտադրամասերի ցանց

Ադրբեջանը, գիտակցելով Աջարիայի կարևորությունը՝ որպես Կովկասում ազդեցության մի օջախ, այստեղ ևս փորձում է ուժեղացնել իր քաղաքա-տնտեսական և էթնիկ ազդեցությունը 2008 թվականի կեսերից սկսած՝ հայկական և ադրբաջանական մամուլում մշտապես տպագրվում են հոդվածներ հարցազրույցներ և վերլուծություններ, որոնք վերաբերվում են Աջարիայում գլխավոր դեր ստանձնելու համար հայ-ադրբեջանական հակասություններին Մասնավորապես, արդեն ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ որ հայ-ադրբեջանական հակամարտությունը վաղուց արդեն դուրս եկել Ղարաբաղի միջպետական սահմաններից Հիմա արդեն երկու հակառակ քաղաքական հետաքրքրություններն իրար են բախվում ոչ միայն կովկասյան տարածաշրջանի տարբեր ծայրերում

Այսօր արդեն կարելի է վստահորեն ասել, որ Աջարիան, որպես քաղաքա-տնտեսական սուբյեկտ, հանդիսանում է շատ պետությունների հակասությունների օբյեկտ Ադրբեջանը Վրաստանի արևմտյան այս հատվածն ընդունում է որպես մի շրջան, որտեղ Բաքուն ունի կարևորագույն ակտուալ խնդիրներ և ռազմավարական հետաքրքրություններ Վերջին շրջանում Բաքվի ղեկավարությունը ակտիվորեն սկսել է իրականացնել տնտեսական և ազգային նախագծերի մի շարք՝ նպատակ ունենալով ի հակառակ հայկական կողմի ուժեղացնել իր ազդեցությունը Որոշ տվյալներով՝ ադրբեջանական ընկերությունները, Թուրքիայի հետ համատեղ, իրականացնում են առափնյա զբոսաշրջային տարածքների լիակատար գնում, բացի այդ, նպատակներ կան գնել նավթային և նավահանգստային պորտալներ Աջարիայի ադրբեջանական համայնքների հզորացումը հանդիսանում է պաշտոնական Բաքվի կարևորագույն խնդիրը Ինքնավար հանրապետության ադրբեջանցիների ակտիվացման համար Վրաստանի ադրբեջանցիների ազգային ասամբլեան ստեղծել է հասարակական-երիտասարդական կազմակերպությունների մի շարք և ակտիվ աշխատանք սկսել Աջարիայի տիրված և փոքրաթիվ ադրբեջանական համայնքի և Բվևմո-Քարթլիի ու Կախեթիայի ադրբեջանականկազմակերպությունների համախմբումը Բացի այդ, Աջարիայի ադրբեջանա-վրացական բարեգործական ընկերության անդամները բավական ուշադիր հետևում են հայկական ազգային փոքրամասնության գործիչների ինչպես նաև հայկական հյուպատոսության ցանկացած ակտիվ գործողություն Պաշտոնական Բաքվի հիմնական խնդիրը, ինչպես երևում է, ոչ միայն տնտեսական օգուտն է, այլև Հայաստանի ցանկացած առևտրա-տնտեսական ուղիների մանրազննին հսկողությունը, որ պեսզի պետք եղած պահին Հայաստան ներմուծվող ապրանքների համար ստեղծվեն արգելքներ և մշտական ուշացումներ

Որոշ տվյալներով Աջարիայի ադրբեջանցիների թվաքանակը տկնհայտ աճել է և համեմատած 1990-ականների հետ,երբ Աջարիայի ադրբեջանցիների թիվը կազմում էր մոտ 1500 մարդ, այսօր արդեն ելնելով Թուրքիայի և Ադրբեջանի ակտիվ ներդրումներից և Վրաստանի տարբեր մասերից այստեղ վերաբնակեցված ադրբեջանցիների համար ստեղծելով հարմարավետ պայմաններ, նրանց թվաքանակը հասել է 5000-ի Ուստարվում են ադրբեջանական տարբեր քաղաքական և հասարակական գործիչների այցեր Աջարիա, տեղական վիտովնիկների և համայնքի անդամների բազմակի հանդիպումներ Նման ձևով պաշտոնական Բաքուն լիակատար ձևով կուժեղացնի իր ազդեցությունը տարածքում՝ չզգալով ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի կողմից որևիցե առարկություն

Օգոստոսյան իրադարձություններից հետո Բաքուն համապարփակ կերպով փոխեց իր վերաբերմունքը Արևմուտքի նկատմամբ և համաչափորեն ակտիվացրեզ իր հարաբերությունները Մոսկվայի հետ Բանը [illegible] է, որ Բաքուն տվելի քան տասնհինգ տարիների ընթացքում չէր կորցնում իր հույսը Ղարաբաղի հարցում որպես իր դաշնակից տեսնել Ռուսաստանին, ինչն էլ առիթ դարձավ Ռուսաստանի համար՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի հարցում այսպես հմտորեն խուսանավել Երևանի և Բաքվի միջև Մոսկվայի և Թուրքիայի պայմանավորվածությունը Կովկասում ազդեցության տարածքների յուրատեսակ բաժանման վերաբերյալ, հիմք ստեղծեց Անկարայի և Մոսկվայի մերձեցման համար՝ տարածաշրջանային տնտեսաքաղաքական համագործակցության հարցում Մոսկվայի հետ, որը Կովկասում իր ազդեցության ամրապնդման համար ստրատեգիկ ուղիներ էր փնտրում, ներկա պահին կսկսի ակտիվորեն դիտարկել տարբեր եղանակներ ղարաբաղյան հարցի լուծման համար առաջին հերթին հաշվի առնելով Բաքվի և Անկարայի քմահաճույքները, քան թե իր ռազմավարական դիրքորոշման Հայաստանի շահերը

Բաքվի համար սցենարի նման զարգացումները դարաբաղյան հարցում բավական ձեռնտու են, սակայն վտանգավոր են ապագայում պետականության նորմալ ձևավորման համար Բանը նրանում է, որ Վրաստանը տարածաշրջանային բոլոր պետությունների համար հանդիսանում է ռազմաքաղաքական, տնտեսական և էթնո-դավանաբանական ազդեցության տարածման օբյեկտ, սակայն Բաքուն, ինչպես և Երևանը, հստակ գիտակցում են, որ Վրաստանին տիրանալու համար Ռուսաստանի, Արևմուտքի և Թուրքիայի միջև տեղի ունեցած պատերազմը կարող է հանգեցնել հարավկովկասյան երեք պետությունների կործանմանը Չնայած ադրբեջանական էթնոքաղաքական նշանակության օրըստօրյա հզորացմանն ու Վրաստանում հայկական հարցի աստիճանական մահացմանը՝ օգոստոսյան իրադարձություններից հետո Վրաստանը հանդիսանում էր այն երկիրը,որն իր ռազմաքաղաքական անկախ գիտակցության մեջ ապահովում էր Հարավային Կովկասի մյուս պետությունների անվտանգությունն ու անկախությունը Եթե Ռուսաստանը անարգել կարողացավ իր զորքերը մտցնել Վրաստանի տարածք, ապա դա կարող է նախադեպ դառնալ թուրքական զորքերի Հայաստան ներխուժման համար ինչպես նաև ՌԴ զինված ուժերի ներխուժում Այրարատյան դաշտավանդակ բաղաքացիների անվտանգությունն ապահովելու հայտարարով Չենք խոսում նաև Բաքվի անմիջական Հայաստանի տարածքում ռազմական գործողություններ սկսելու հավանականության մեծացման մասին Այլ խոսքերով ասած ասասում բվոն արդեն անդառնալիորեն կորած է և այսօր հասկանալի Հայաստանն ինքը պետք է նախաձեռնող կողմ հանդիսանա փորձելով սահուն խուսանավել Ռուսաստանի և Թուրքիայի միջև փորձելով ամբողջապես չեզոքացնել Լեռնային Ղարաբաղին սպառնացող վտանգը

Ռուսաստանը, ինչպես և Թուրքիան, մշտապես փորձելու են ամբողջապես զբաղվել դարաբաղյան հարցով, որպեսզի կարողանան ամբողջովին տիրապետել Ղարաբաղի արտաքին քաղա-

թական գործոնին Դա հնարավոր կլինի միայն «խաղարարար ուժերի» տեղակայմամբ՝ միտումնավոր կերպով ստեղծելով այլընտրանքային նախադրյալներ Լեռնային Ղարաբաղում նոր զինված հակամարտություն հրահրելու համար քաղաքականապես հնշում գործադրելու ինչպես Երևանի այնպես էլ Բաքվի վրա

Հենց սա էլ ստիպեց Բաքվին մեղմացնել իր արտաքին քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ, որպեսզի ղարաբաղյան հարցի լուծման ժամանակ առավելություն օգուտ բաղի, և հատկապես այս իրավիճակը Հայաստանի կառավարությանը դրեց նեղ կացության մեջ, երբ բոլոր միջնորդները ԵԱՀԿ համանախագահ երկրները էլ չենք խոսում Թուրքիայի մասին, սկսեցին պնդել հենց առաջինը Հայաստանի կողմից տարածքային զիջումների մասին Երևանի ամենամեծ սխալն այն էր, որ երկրի՝ իրար հաջորդող ղեկավարությունները արդեն երկար տարիներ իրենց բոլոր արտաքին հանդիպումներում և բանակցություններում, որտեղ խոսք էր գնում ԼՂ հարցի կարգավորման վերաբերյալ, անընդհատ պնդում են տարածքային զիջումների մասին և որ հարցը կարող է լուծվել միայն փոխզիջումների ճանապարհով, այն դեպքում, երբ Բաքուն միանգամայն հանգիստ, պարբերաբար սպառնում է պատերազմով, դրանով իսկ հետաքրքրված կողմերին ցույց տալով, որ ինքը ոչ մի իրական զիջումների չի պատրաստվում գնալ

Միևնույն ժամանակ, 2008 թ -ի սեպտեմբերից, երբ խոսք էր գնում ռուս-թուրքական ալյանսի փորձերի՝ Ղարաբաղի հարցը լուծելու վերաբերյալ, Հայաստանի ղեկավարությունը անմիջապես սկսեց խաղարկել «Ադրբեջանին խաղաղության պարտադրումը»՝ փորձելով իր իսկ հանրությանը ցույց տալ, որ ղեկավարությունը անում է ամեն ինչ նոր հակամարտության սկիզբ թույլ չտալու համար Բայց դրա համար պաշտոնական Երևանը հայտնում է իր պատրաստակամությունը՝ հակամարտության հարցը լուծել մադրիդյան սկզբունքների հիման վրա, որը իրականում դեպի կորստի է տանում ղարաբաղյան ֆրոնտում հայկական կողմի ունեցած բոլոր ձեռքբերումները Այլ

կերպ ասած ռուս-թուրքական այլանսը, հասկանալով, Հայաստանը, իր ոչ այնքանն սիրված ղեկավարությամբ, ավելի հեշտ կտրվի արտաքին ուժերի ճնշմանը, քան Բաքվում նավթային հսկաների բռնապետական ռեժիմը Ղարաբաղում Ռուսաստանի նպատակը նրա ամբողջական ռուսաֆիկացումն է և Մոսկվայի հովանավորությամբ ղարաբաղյան հարցի լուծման պատրանք ստեղծելը և Կրեմլում միանգամայն նույնն է, թե որ պետության կազմի մեջ կմտնի Ղարաբաղը Ինչպես Մոսկվայի, այնպես էլ Անկարայի գլխավոր խնդիրը հանդիսանում է հայ-ադրբեջանական հակամարտության գոնե քաղաքական լուծումը, որպեսզի հետագայում թույլ չտան մյուս տերությունների փորձերը՝ օգտագործել ղարաբաղյան հակամարտության լուծված չլինելը խաղի կանոնները իրենց օգտին փոխելու նպատակով

Այսպիսով, ինչպես պարզ դարձավ,Ղարաբաղը, որպես Կովկասում իրենց քաղաքականության ամրապնդման ռազմաքաղաքական կետ որպես պայքարի գլխավոր օբյեկտ է հանդիսանում մի քանի տարածաշրջանային և համաշխարհային տերությունների համար Եթե ռուսական զորքերի տեղակայումը Վրաստանում հանգեցնեց Ռուսաստանի կողմից քաղաքական, ռազմական գերիշխանություն Ղարաբաղում,ապա Անկարայի նման նախաձեռնող դիրքը ավելի քան հասկանալի է, սակայն Ղարաբաղի հարցում երկու տերությունների կոնսենսուսային դիրքորոշումը Ես չենք խոսում Հայաստանի քաղաքական ամաչկոտության մասին, հանգեցրեց մի շարք փուլային փաստաթղթերի ստորագրմանը, որոնցից մեկն էլ Մոսկվայում ստորագրված համաձայնագիրն է Հայ քաղաքական գործիչներն այն արդեն որակել են որպես աննշան, և իրականում ոչ այնքան կարևոր փաստաթուղթ, որպեսզի թմրեցնեն հանրության զգոնությունը նախկին ԼՂԻՄ-ի տարածք խաղաբուսրների մուտքի վերաբերյալ՝ զուգակցելով այն 5-7 տարածքների հանձնմամբ

Ռուսական կողմի վճռականությունը՝ հակամարտության հարցը լուծել Թուրքիայի օգնությամբ, ևս մեկ անգամ

ապացուցում են պետական մակարդակով միմյանց փոխարինող քննարկումները և կոնֆերանսները, որոնց մասնակցում են առաջատար քաղաքական փորձագետներ, վերլուծաբաններ և քաղաքական գործիչներ Նման միջոցառումներից մեկն էլ հանդիսանում է ՌԴ նախագահի աշխատակազմի՝ Անկարայում հոկտեմբերի 31-ին կազմակերպված կոնֆերանսը՝ «08 08 2008 թ-ից հետո Հյուսիսային Կովկասի անվտանգության նոր նախագիծ» թեմայով Նշենք, որ նման կոնֆերանս՝ մոտ 60 փորձագետների և քաղաքական գործիչների մասնակցությամբ ծրագրվում էր կազմակերպել Երևանում սակայն որոշ տվյալներով կամ էլ թուրքական կողմի խնդրանքով, կամ էլ թե չէ Հայաստանի ղեկավարության անվճռականության պատճառով կոնֆերանսը կազմակերպվեց Անկարայում Գրեթե զուգահեռ, նման մի միջոցառում էլ կազմակերպվել էր Թեհրանում, որի ժամանակ իսլամական պետության ղեկավարության ներկայացուցիչները սուր քննադատության ենթարկեցին Թուրքիայի նախաձեռնողականությունը՝ «Կովկասում համագործակցության և կայունության պլատֆորմ» ստեղծելու ուղղությամբ, հայտարարելով, որ Թեհրանը մշակում է այլընտրանքային նախագիծ՝որը մոտ ժամանակներս կներկայացվի միջազգային հանրությանը և տարածաշրջանային պետություններին Ուսումնասիրելով Անկարայի կոնֆերանսի նյութերն ու քննարկումները, պարզ է դառնում, որ գլխավոր հարցը ամենևին էլ Վրաստանի և նրա տարածքային-քաղաքական ապակատագրի հետագա բարելավումը չէր Կոնֆերանսը ավելի գլոբալ բնույթ ուներ և առնչվում էր մի շարք հարցերի հետ, որոնց ժամանակ կազմակերպիչները փորձել էին անդրադառնալ ինչպես Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներքին քաղաքական-հասարակական, այնպես էլ քաղաքական նոր իրավիճակի և կազմակերպվող նախագծերի գործընթացի ընկալմանը կովկասյան հանրապետությունների և ազգային ներկայացուցիչների շրջանում

Կոնֆերանսի մթնոլորտն ուսումնասիրելով և հիմնվելով ստեղծված քաղաքական իրավիճակի վրա՝ նկատում ենք մի շարք նախագծեր, որոնք զուգահեռաբար պետք է մշակվեն և իրագործվեն մոտ ժամանակներում Տարածաշրջանային վերջնական ռուս-թուրքական նախագիծը կլինի Վրաստանի և Ադրբեջանի ֆեդերալիզացիան Սակայն, այս ամենը կիրակա-նացվի ի վնաս տարածաշրջանում հայկական շահերին Ամենայն հավանականությամբ, հայկական կողմին կտրամա-դրվի Ջավախքի (առանց Սամցխեի) ինքնավարության կարգա-վիճակ, ԼՂ-ում ինքնավարության ձևավորմանը զուգահեռ՝ նախկին ԼՂԻՄ-ի և Լաչինի միջանցքի սահմաններում Քելբաջարի անորոշ կարգավիճակով Այլ խոսքերով ասած՝ այն բանի փոխարեն որ հայկական կողմը կիանձնի ստնվազն հինգ շրջան և կսկսի ԼՂՀ-ի պաշտպանության բանակի ապազինությունը խորհրդարանների տեղակայման ֆոնի վրա, իրր թե տարածաշրջանում անվտանգություն ապահովելու համար Հայաստանին Ջավախքի ինքնավարությունը կտրվի դարարաղյան ստատուսի փոխհատուցման համար Սակայն ակնհայտ է որ դարարաղյան հարցի լուծման նկատմամբ նման մոտեցումը միտումորեն, վերադարձ է դեպի 1988-1989-ականների ավելի վատ վիճակով

Սա, փաստորեն, քաղաքական խայծ է, որն իր արհեստավարժ չլինելու և անհեռատեսության պառճառով կարող էր կուլ տալ Հայաստանի կառավարությունը Հենց այսպես էլ Ղարաբաղը, որպես Կովկասում ազդեցությունն ուժեղացնելու ռազմաքաղաքական սուբյեկտ, կդադարի բացառապես հայկական լինելուց և տարածքների հանձնման ու ռուսական խաղարարարների տեղակայումից հետո կարճ ժամկետներում կդառնա ռուսական «ճնշման բանալի», իսկ հետագայում լիակատար ադրբեջանական հենակետ՝ հետագա-յում Զանգեզուր և Իրանի հյուսիսային շրջաններ էթնո-քաղա-քական զանգվածների համար Այսպիսով, Հայաստանը ամբողջությամբ դուրս կմղվի բոլոր ռազմաքաղաքական օբյեկտ-

ներից և կհայտնվի էթնոքաղաքական ծանր կացության մեջ, կկորցնի դարաբաղյան սուբյեկտի նկատմամբ իր ունեցած առաջնությունը և չի կարող որպես հավասարը հավասարի գործել Ադրբեջանի և Վրաստանի հետ՝ Կովկասում էթնոքաղաքական ազդեցության ուժեղացման գործում Հայկական կողմի համար միակ ձեռնտու գործոնը կդառնա տնտեսական կարճաժամկետ, անորոշ օգուտները Թուրքիայի և Ադրբեջանի սահմանները բացելուց հետո

Նման իրավիճակը Հայաստանի համար անելանելի չէ. Նախ և առաջ, երկրի ղեկավարությունը պետք է հասկանա մեկ պարզ իրողություն, որ եթե կարելի է հայտարարել համագործակցության ձգտման մասին և Ադրբեջանի ու Վրաստանի հետ ստեղծել համատեղ ապագա, ապա պարտադիր չէ իրականում ամեն կերպ ձգտել դրան՝ ի վնաս սեփական շահերի Կովկասյան ժողովուրդների հասարակական-քաղաքական ներդաշնակ «եղբայրություն» առանց էթնոքաղաքական և տարածքային պահանջներով, ինչի մասին պնդում են Արևմուտքը, Թուրքիան և հիմա արդեն Մոսկվան, փորձում են ոչնչացնել պետական, կրոնական և էթնիկական ազգայնականության ցանկացած դրսևորում, որպեսզի կլանեն կովկասյան հանրությունների ինտերնացիոնալացումը իրենց էթնոքաղաքական տերությունների միջև Միասնական և բարեկամական Կովկասի ստեղծման մասին առասպելը ծրագրվել էր լեհ-թուրքական կովկասագետների և քաղաքական գործիչների կողմից՝ 1920-30-ական թթ Հրահրելու, իսկ հետո և համակովկասյան հակախորհրդային ապստամբություններին համագործակցելու համար Հետագայում հայերի, ադրբեջանցիների և վրացիների ազգային-ազատական գիտակցությունը չարթնացնելու համար ամբողջ տարածաշրջանը պետք է մտներ Թուրքիայի կազմի մեջ որպես կովկասյան ինքնավար համադաշնություն Նշենք որ ռուսական կայսրության ղեկավարությունը Կովկասի ինտերնացիոնալացման հարցը լուծում էր տարբեր նահանգներ ստեղծելու ճանապարհով, որտեղ կովկասյան ոչ մի ազգ չէր ունենալու էական առաջնություն

Այսօր, երբ Հայաստանը ծանր դրության մեջ է, երկրի ղեկավարությունը և փորձագիտական խմբերը պետք է իրատեսորեն գնահատեն ստեղծված քաղաքական իրավիճակը և մշակեն հստակ ռազմաքաղաքական, տնտեսական և ազգային խնդիրներ և նպատակներ՝ առաջիկա մի քանի տասնամյակների համար Միանգամայն ակնհայտ է, որ Ղարաբաղի ներկայիս վիճակը ձեռնտու է հայկական կողմին, սակայն սուր ձևով կանգնած է տնտեսական աճի հարցն ու դեմոգրաֆիական խնդիրը, քանի որ հայկական Ղարաբաղը որպես գործոն, նախ և առաջ մեծաքանակ բնակչություն է և նրանից ձևավորված բանակ

Օգոստոսյան իրադարձություններից հետո Հայաստանը հիանալի հնարավորություն ուներ՝ ակտիվանալ Վրաստանի հետ հարաբերություններում Հայաստանի և Վրաստանի փրկությունը այս երկու կովկասյան պետությունների համագործակցությունն է երկու դարավոր թշնամիների ակտիվացման ժամանակ Սակայն սկզբի համար հայկական կողմը պետք է վստահ լինի առնվազն երկու պարագաներում Նախ Սամցխե-Ջավախքի հայերի անվտանգությունը Վրաստանի կառավարությունը, արդեն երկար տարիներ Հայաստանի արտաքին քաղաքականության երկչոտության և չեզոքության պատճառով արագ տեմպերով փորձում է լուծել Վրաստանում հայկական հարցը Սամցխե-Ջավախքի հայության վրա մշտական և հնարավոր բոլոր ճնշումները գործադրելով Հայ ազատամիտ երիտասարդության բանտարկությունները, ազգային հողի վրա մշտական սպանությունները, եկեղեցիների և դպրոցների վրացացումը, ինչպես նաև հայկական տարածքների վերաբնակեցումը վրացական էթնիկ տարրերով, ապացուցում է Վրաստանի թշնամական վերաբերմունքը Հայաստանի հանդեպ

2008 թվականի օգոստոսին վրացական բանակի ջախջախման սկզբով հենց հայկական կողմը պետք է ի լուր աշխարհի բարձրացներ Վրաստանի ինքնավարության հարցը, այլ ոչ թե Թուրքիան և Ադրբեջանը Հենց Սամցխե-Ջավախքի ինքնավարությունն էլ, Ծալկայի շրջանի՝ նահանգի մեջ մտնելն

ու հայկական ինքնավար պետության, կարող են դառնալ լուրջ ապագելք վրացական պետության կազմալուծման անշեղ գործընթացում Հայկական քաղաքական վերնախավի համար մի բան պետք է պարզ լինի, որ ամենաանվտանգ և հուսալի ուղին դեպի արտաքին աշխարհ պետք է լինի ոչ թե Թուրքիայի սահմանների պատրանքային բացումը, այլ հենց հայաբնակ և ամրապնդվող Սամցխե-Ջավախք ինքնավար հանրապետությունը, որը կդառնա անվտանգության և կայունության երաշխիք Հայաստանի տրանսպորտային-տնտեսական միջանցքի սպասարկման համար Ավելին, Սամցխե-Ջավախքում ինքնավարություն ստանալու Ռանապարհով Հայաստանը կարող է դառնալ ակտիվ արտաքին քաղաքական «խաղացող»՝ էներգառեսուրսների տեղափոխման գործում, որոնց ուղիները առանց բացառության անցնում են Սամցխե-Ջավախքով Բացի այդ, Երևանը պետք է լուրջ վերաբերվի աջարական գործոնին, այնքանով, որքանով որ տարածաշրջանում նրա մրցակցության հաջողությունն ու արդյունավետությունը, կապված է հենց Աջարիայի հետ Աջարիայի հայկական բնակչության ուժեղացման հետ նրա աստիճանական ակտիվացումը ինքնավար հանրապետության էթնոքաղաքական կյանքում կարող է դառնալ կարևոր օջախ Երևանում հմուտ քաղաքական գործիչների ձեռքում Թբիլիսիի համար հայկական գործոնի ակտիվացումը երկրի հարավում նույնքան շահավետ է քանի որԱջարիայի՝ Սամցխե-Ջավախքի հետ թույլ և անվտանգ «հայացումը» չեզոքացնում է երկրում թուրք-ադրբեջանական գլավթողական քաղաքականությունը Վրաստանը, որը սեղմված Ռուսաստանի և Թուրքիայի արանքում, այլ ելք չունի, քան ենթարկվել հայկական պետության կամքին, հակառակ դեպքում, Երևանը ստիպված կլինի անել ամեն ինչ, որպեսզի լիովին ապահովի և անվտանգ դարձնի իր ուղիները դեպի արտաքին աշխարհ հնարավոր միջոցներով, քանի որ առանց այս հարցերի լուծման Հայաստանի և Վրաստանի համագործակցությունն անիմաստ է

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱԴՐԲԵՋԱՆԱ-ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հրանտ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Վլադիմիր Պուտինի նախագահության օրոք ՌԴ ղեկավարությունը կարողացել է երկրի առջև ծառացած մի շարք խնդիրների դրական լուծում տալ

Դա կայուն հիմք է նախապատրաստել Ռուսաստանի քաղաքական ազդեցության և միջազգային հեղինակության բարձրացման համար Պուտինին նախագահի պաշտոնում փոխարինած Դմիտրի Մեդվեդևը, հավատարիմ մնալով իր նախորդի կողմից որդեգրած քաղաքական ուղուն, շարունակեց ազգության նորանոր լծակներ ձեռք բերելու քաղաքականությունը, ինչը, վերջին հաշվով, ուժերի համաշխարհային նոր վերադասավորումների պատճառ դարձավ Ռուսաստանի ռազմական միջամտությունը վերսկսված վրաց-օսական պատերազմին դարձավ արևելք-արևմուտք հակամարտության նորագույն փուլի սկիզբը

ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև «սառը պատերազմի վերսկսումը փորձագետները կանխագուշակել էին դեռևս 2008 թվականի սկզբին Բանը նրանում է, որ Արևմուտքի քաղաքագետները, գնահատելով Բուշի արտաքին քաղաքականության ձեռքբերումներն ու բացթողումները, եկել էին այն եզրակացության, որ ԱՄՆ նոր նախագահը ստիպված է լինելու դիմել «արտաքին քաղաքական նահանջի» Դրան զուգահեռ սպասվում էր ռուսաստանյան արտաքին քաղաքականության ակտիվացում, ինչը Արևմուտքի փորձագետները համարում էին անկասելի Միջազգային քաղաքականության այդպիսի վերադասավորումն ԱՄՆ-ի համար, անկասկած, հղի էր մի շարք մտավախություններով

Պաշտոնական Վաշինգթոնը ելքեր էր որոնում ռուսական ագրեսիվ քաղաքականությանը դիմակայելու համար Որպես հնարավոր սցենար դիտարկվում էր Վրաստանի և Ուկրաինայի ներգրավումը ՆԱՏՕ, ինչպես նաև Արևելյան Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության կայանների տեղադրումը Սակայն ԱՄՆ-ի հենց այս նախաձեռնություններն էլ կատալիզատորի դեր խաղացին Ռուսաստանի արտաքին քաղաքականության էլ ավելի ագրեսիվանալու համար Ռուս-վրացական պատերազմը ցույց տվեց, որ Մոսկվան ամբողջությամբ վիտակցում է ստեղծված իրավիճակի բոլոր դրական և բացասական կողմերը և չի պատրաստվում բավարարվել տոխկինում ունեցած իր ազդեցությամբ

Այժմ արդեն ամերիկյան փորձագետների առջև դրված է նոր խնդիր պարզել, թե ինչ էր նշանակում ռուսական բանակի մուտքը Վրաստան Արդյո՞ք խոսքը գնում է ԽՍՀՄ նախկին պետությունների հանդեպ Ռուսաստանի ազդեցության վերականգնման հետևողականորեն իրականացվելիք ծրագրի սկզբի մասին Այս հարցի պատասխանն ստանալու համար Ռուսաստան են գործուղվել արևմտյան մի շարք լրագրողներ, որոնք բրիտանական և ամերիկյան մամուլում արդեն իսկ պնդում են, որ Ռուսաստանը վերադառնում է դեպի ԽՍՀՄ

Արևմտյան փորձագետների կողմից բարձրացված վերոնշյալ հարցի պատասխանը չափազանց կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանի համար Բանը նրանում է, որ Կովկասում ակտիվություն ցուցաբերող Ռուսաստանի Դաշնությունը, որը հանդիսանում է նաև Հայաստանի ստրատեգիական դաշնակիցը, ամենևին էլ չի պատրաստվում սահմանափակվել Վրաստանի հետ հարաբերություններ պարզելով Ռուսաստանում այսօր ձևավորվել է կովկասյան նոր քաղաքականություն, որն ենթադրում է այս տարածաշրջանի ամբողջական հպատակեցում պաշտոնական Մոսկվայի շահերին և չի բխում հայ-ռուսական ստրատեգիական դաշնակցության տրամաբանությունից

Այսօր Հայաստանի և Ռուսաստանի միջև վիճահարույց հարցերը գնալով շատանում են, իսկ քաղաքական ղեկավարների վերընտրությունը հակառակորդի նկատմամբ՝ կոշտանում Այս իրողություններն ունեն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ

պատճառներ, սակայն, կարծում եմ, դրանց պատճառները պետք է փնտրել նախկին ԽՍՀՄ երկրներում իր ազդեցությունը վերականգնելու Ռուսաստանի ձգտման մեջ.

Նախքան վրաց-օսական պատերազմի վերսկսումը, Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը չուներ միանշանակ բնորոշում Մեր տարածաշրջանում Ռուսաստանի շահերը հիմնականում հանգչում էին մի քանի աշխարհաքաղաքական և տնտեսական նշանակություն ունեցող գործոնների Դրանցից կարելի է առանձնանցել Արևմուտքի չափից մեծ ազդեցության կանխարգելումը, կայունությունը, տրանսպորտահաղորդակցման ճանապարհների վերահսկումը և այլն Այս խնդիրները լուծելու համար պաշտոնական Մոսկվան հաճախ դիմում էր իրարամերժ քայլերի, ինչը հնարավորություն էր տալիս Հարավային Կովկասի երկրներին վարել քիչ թե շատ անկախ և ճկուն արտաքին քաղաքականություն

Այսօր իրավիճակը զգալիորեն փոխվել է· Այդ փոփոխությունը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունն այլևս չի դիտարկում Կովկասը որպես «աշխարհից կտրված» մի տարածաշրջանի Նախկինում, խոսելով Հարավային Կովկասի երկրների մասին ռուսաստանյան դիպլոմատները վստահ էին, որ նրանք միշտ կմնան պաշտոնական Մոսկվայի ազդեցության տակ Ելնելով այդ վստահությունից ռուսաստանյան կողմը «մատների արանքով» էր նայում այստեղ տեղի ունեցող ցանկացած գործընթացներին Եվ դա շարունակվում էր այնքան ժամանակ, քանի դեռ Արևմուտքն իր ռազմա-քաղաքական և տնտեսական ծրագրերն էր իրագործում Աֆղանստանում, Իրաքում և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում. Նշված տարածաշրջաններում տեղի ունեցող ռուս-ամերիկյան մրցակցությունը սակայն չէր կարող չանդրադառնալ Հարավային Կովկասի երկրների արտաքին քաղաքականության վրա Եվ դա այն պարզ պատճառով, որ մեր տարածաշրջանը գտնվում է Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի, Սև ծովի ավազանի մեջտեղում. Այս փաստը ինքնաբերաբար բարձրարեց Հարավային Կովկասի երկրների քաղաքական և տնտեսական նշանակությունը, ինչի հետևանքով էլ Արևմուտքն սկսեց

ակտիվորեն ինտեգրել Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը արևմտյան զանազան ծրագրերի մեջ

Ռուսական դիվանագիտությունը բավական ուշ հասկացավ իր հարավային սահմաններին կից տեղի ունեցող բարդաբնական գործընթացների տրամաբանությունն ու ուղղվածությունը Այդ իսկ պատճառով Հարավային Կովկասում իր թուլացած ազդեցությունը վերականգնելու համար անհրաժեշտ եղավ դիմել զենքի ուժի· Թե որքանով էր հարցերի լուծման այդ ճանապարհը արդյունավետ Ռուսաստանի արտաքին քաղաքականության առջև դրված խնդիրների լուծման համար, ցույց կտա ժամանակը Այս հարցի կապակցությամբ կցանկանայի միայն նշել տարածաշրջանի և միջազգային բազում քաղաքագետների ու վերլուծաբանների այն կարծիքը, համաձայն որի ամրապնդվելով Աբխազիայում և Հարավային Օսիայում՝ Ռուսաստանը զրկվեց Վրաստանի վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորություններից՝ հարթակը թողնելով արևմտյան ուժերին. Վերջիններս էլ չհապաղեցին օգտվել ընձեռնված առիթից և սկսեցին ակտիվորեն զինել Վրաստանը Բացի այդ, Սև ծովի ավազանը բառացիորեն լցվեց ամերիկյան ռազմական նավերով, ինչը բացարձակապես անընդունելի է Ռուսաստանի Դաշնության համար

Ներկայիս ստեղծված նոր իրավիճակում Հարավային Կովկասն արդեն հանդես է գալիս որպես գլոբալ քաղաքական գործընթացների կարևորագույն բաղադրիչներից մեկը. Ռուսաստանի քաղաքական վերնախավն այլևս չի կարող դիտարկել Հարավային Կովկասը որպես իր մշտական ազդեցության ոլորտ Մոսկվան այլևս գիտակցում է, որ այդ տարածաշրջանի հետաքրքիր պետք է պայքարել Եվ այդ պայքարն ուրեմն չի սահմանափակվում միայն մեր աշխարհագրական սահմաններով Խաղատախտակին փաստորեն դրված է Ռուսաստանի կայսրություն լինել կամ չլինելու հարցը Եվ Հարավային Կովկասն այդ մեծ խաղատախտակի ընդամենը մի քանի վանդակն է զբաղեցնում Պայքարը ընթանալու է Ռուսաստանի Հարավային և Արևմտյան սահմանի ողջ երկայնքով մեկ

Հարավային Կովկասի քաղաքական նշանակության բարձրացմամբ է պայմանավորվում Ռուսաստանի քաղաքակա-նության փոփոխությունը մեր տարածաշրջանի հանդեպ Ներկայումս պաշտոնական Մոսկվան այլևս չի էլ մտածում միայնակ պայքարել Կովկասի համար. Ռուսաստանում գիտակցում են, որ գլոբալ հակամարտության մեջ քիչ թե շատ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ են ազդեցիկ և կանխագուշակելի գործընկերներ Սակայն Մոսկվայի համար նաև պարզ է, որ հնարավոր գործընկերները հազիվ թե համաձայնվեն օժանդակել Ռուսաստանին Արևմուտքի հետ մրցակցության ընթացքում հենց այնպես Բնական է, որ ցանկացած պետություն, որը ստիպված կլինի կամ կցանականա ընտրություն կատարել Արևմուտքի և Ռուսաստանի միջև, ելնելու է իր սեփական շահերից Ուստի Կրեմլում հնարավոր դաշնակիցներին սիրաշահելու քաղաքականություն սկսելու մասին որոշում է կայացվել

Եվ ամենևին էլ պատահական չէ, որ առաջին հերթին Ռուսաստանի դիվանագետների ուշադրությունը սևեռվեց Հայաստանի արևմտյան հարևան Թուրքիայի վրա Թուրքիան բավական լուրջ ազդեցության լծակներ ունի ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ Մերձավոր Արևելքի և Սև ծովի հարակից տարածաշրջանների երկրների վրա Դրա հետ միասին, այդ երկիրը ունի նաև բազում տնտեսական և քաղաքական խնդիրներ, որոնք անընդհատ մեծ դժվարություններ են առաջացնում Անկարայի համար Հաշվի առնելով այս հանգամանքները՝ ռուսական դիվանագիտությունը որոշել է համագործակցություն սկսել Թուրքիայի հետ՝ հույս ունենալով, որ հետագայում նա հնարավորություն կունենա վերահսկել Թուրքիայի ազդեցության անխուսափելի մեծացումը տարածա-շրջանում

Պետք է նշել, որ Ռուսաստանի այս նախաձեռնությունը հակասում է նաև Թուրքիայի հետ կապված Արևմուտքի քաղաքական շահերին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի վերլուծա-բաններն ու փորձագետները բավական մեծ ջանքեր են ներդրել.

Հարավային Կովկասում Թուրքիայի ազդեցությունն թուլացնելու համար. Լոնդոնում և Վաշինգտոնում հասկանում են, որ դա կարող է դուրս բերել Թուրքիան իրենց ազդեցության գոտուց վերածելով նրան տարածաշրջանային հզոր կայսրության. Այդ իսկ պատճառով արևմտյան դիվանագիտությունը փորձեց կանխել ռուս-թուրքական հարաբերությունների ջերմացումը· Սակայն նրանց գործադրած ջանքերը, կարծես թե, սպասված արդյունքների չհանգեցրին, ինչի հետևանքով մենք այսօր կարող ենք հանգիստ փաստել, որ Թուրքիայի և Արևմուտքի հարաբերությունները զգալիորեն վատթարացել են

Թուրքական կողմը շատ զգուշությամբ ընկալեց համագործակցության մասին Ռուսաստանի առաջարկը Պաշտոնական Անկարան որոշեց ստուգել Մոսկվայի անկեղծությունը և մի քանի նախապայմաններ առաջարկեց ռուսական կողմին Եվ քանի որ խոսքը գնում էր Հարավային Կովկասի երկրների մասին, Թուրքիայի բարձրացրած գլխավոր հարցերը վերաբերվում էին Հայաստանին· Խոսքն առաջին հերթին գնում էր արցախյան հակամարտության կարգավորման և հայերի Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրներին Ռուսական կողմն այն ժամանակ ընդունեց Թուրքիայի պահանջները և, որպես ապացույց, ճնշումներ գործադրեց հայկական կողմի վրա՝ պահանջելով նորմալացնել հարաբերությունները Թուրքիայի հետ Արդյունքում մեր «կոմպլիմենտար քաղաքականությունը» փոխարինվեց «ֆուտբոլային դիվանագիտությամբ». Հայաստանի արտաքին քաղաքականության նոր ուղղվածության սկիզբ կարելի է համարել 2008 թվականի հունիսի 23-ը, երբ Սերժ Սարգսյանը Մոսկվայից հրավիրեց Աբդուլլահ Գյուլին Երևան՝ Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը միասին դիտելու

Դիվանագիտական այս փոփոխություններից հետո սկսվեց լարվել իրավիճակը վրաց-օսական հակամարտության գոտում, որն ի վերջո հանգեցրեց ռուս-վրացական «Հինգօրյա պատերազմին» Օգոստոյան այդ իրադարձություններից հետո սկսվեց Թուրքիայի «աստղային ժամը» Օգոստոսի 15-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց թուրքական նոր նախաձեռնության մասին Նախատեսվում էր Կովկասում ստեղծել «Համագործակցության և կայունության պլատֆորմ»·

Այս նախաձեռնության շրջանակներում մինչ օրս շարունակվում են ռուս-թուրքական դիվանագիտական բանակցությունները, որոնց այս կամ այն փուլի ժամանակ ներառվում են նաև Հարավային Կովկասի երկրների ներկայացուցիչները: Սակայն, պետք է նշել, որ հազիվ թե ռուս-թուրքական հարաբերությունների նոր մերձեցումն երկար կյանք ունենա Եվ դա ունի մի քանի պատճառներ, որոնցից գլխավորն Ամերիկայի Միացյալ Նահանգների գործոնն է

Բանը երևում է, որ ո՛չ Մոսկվան, և ո՛չ էլ հատկապես Անկարան, չեն ցանկանում պատասխանատվություն կրել մյուս կողմի գործունեության համար Պայքարելով հիմնականում ԱՄՆ-ի դեմ երկու պետություններն էլ, այնուամենայնիվ, չեն ցանկանում փչացնել հարաբերությունները Արևմուտքի հետ Բացի այդ, ռուս-թուրքական հարաբերությունների հետագա զարգացմանը խանգարում է երկու կողմերի քաղաքական վերնախավի անվստահությունը հակառակորդի հանդեպ. Ե՛վ Մոսկվայում և Անկարայում հիանալի գիտակցում են, որ երկու պետությունների դաշինքը չի կարող երկար կյանք ունենալ, քանի դեռ նրանց կենսական շահերը հակասում են միմյանց· Ուստի, երկու պետությունների առաջնորդները ներկայումս ձգտում են նոր պլան մղել կողմերի երկարաժամկետ ստրատեգիական շահերը փորձելով իրենց ռեսուրսները կենտրոնացնել կարճաժամկետ, բայց կարևոր ծրագրերի իրականացման վրա

Ռուս-թուրքական հարաբերությունների թեկուզ և կարճատև բարելավումը չի կարող բխել Հայաստանի Հանրապետության կենսական շահերից. Մանավանդ, որ այդ հարաբերությունների հիմքում ընկած է այնպիսի առևտուր, որն առնչվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանին և ընդհանրապես ամբողջ Հայաստանին Ուստի պաշտոնական Երևանը պետք է ջանք ու եռանդ չխնայի ռուս-թուրքական ձևավորվող նոր դաշինքը խափանելու համար Եվ, որքան էլ տարօրինակ չէ, այդ խնդրի լուծման համար Հայաստանն ունի բավական լուրջ լծակներ. Նախ, անհրաժեշտ է, որպեսզի հայկական կողմը վճռական ոչ ասի տարածքային զիջումներ ենթադրող ցանկացած առաջարկի· Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության հարցը նկեղեցական Սուրբ Խորհրդի պես անձեռնմ-

խելիության կարգավիճակ պետք է ստանա հայկական դիվանագիտության համար

Երկրորդ քայլը, որին պետք է դիմի Հայաստանը ռուս-թուրքական դաշինքը խափանելու համար, «Կովկասում համագործակցության և կայունության պլատֆորմից» հրաժարվելն է. Առանց հայկական կողմի մասնակցության, այդ նախագիծը կորցնում է այն քաղաքական նշանակությունը, որին ձգտում է թուրքական կողմը Իսկ եթե պլատֆորմից հրաժարվելուն զուգահեռ Հայաստանը զարկ տա նաև հայ-իրանական քաղաքական հարաբերություններին, ապա լիովին կխափանի թուրքական դիվանագիտական հաշվարկները Հարավային Կովկասում

Ռուս-թուրքական հարաբերությունների բարելավմանը լուրջ խոչնդոտ կարող են հանդիսանալ նաև հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված հայկական սփյուռքի ջանքերը. Եթե հայկական արտաքին քաղաքականությունը կարողանա հասնել նրան, որպեսզի ԱՄՆ-ի նոր նախագահի վարչակազմը ճանաչի ցեղասպանությունը, ապա Թուրքիան կհայտնվի այնպիսի բարդ իրավիճակում, որ ստիպված կլինի հրաժարվել Հարավային Կովկասում իրականացվող իր նվաճողական քաղաքականությունից.

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԳՈՐԾՈՆԸ

Արևմուտքը հարավկովկասյան տարածաշրջանը միշտ դիտարկել է իբրև Ռուսաստանի հետ մրցակցության առաջնային մարտադաշտ Արևմտյան քաղաքականությունը բավական ճիշտ է գնահատել մեր տարածաշրջանի բոլոր առավելությունները ու թերությունները և եկել այն եզրակացության, որ Հարավային Կովկասը կարող է լուրջ արգելք հանդիսանալ Ռուսաստանի արտաքին նվաճողական քաղաքականության համար Ընդ որում հաշվի են առնվել այս տարածաշրջանի քաղաքական, աշխարհագրական, տնտեսական, էթնիկ և այլ առանձնահատկությունները Արևմտյան դիվանագիտությունը հասկանում է նաև, որ Հարավային Կովկասի քաղաքական գործընթացները կարող են որոշ չափով կատալիզատորի դեր խաղալ Հյուսիսային Կովկասում իրավիճակն ապակայունացնելու համար Ուստի

Արևմուտքը զգալի ջանքեր է ներդնում Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի շահերի բախման կիզակետում ուժեղ դիրքեր ձեռքբերելու համար

Այդ նպատակին հասնելու համար Արևմուտքը նպաստել է Հարավային Կովկասի երկրների քաղաքական նշանակության և կարևորության բարձրացմանը Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը ակտիվորեն ներգրավվում են միջազգային քաղաքական և տնտեսական գործընթացներում Արևմտյան կապիտալի շնորհիվ Հարավային Կովկասը վերածվել է Արևելք-Արևմուտք առևտրական ճանապարհների կարևորագույն օղակներից մեկի Այստեղ կառուցվեցին նավթամուղեր, գազամուղեր և ժամանակակից քաղաքակրթության այլ հրաշքներ Նույնիսկ Վրաստանն ու Ադրբեջանը ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկելու նպատակներ կան

Արևմուտքի համար չափազանց կարևոր է, որպեսզի Հարավային Կովկասի դիրքերն ամրանան: Միայն այդ պարագայում մեր տարածաշրջանի երկրները կկարողանան մրցակցել իրենց հզոր հարևանների հետ, ինչը հնարավորություն կտա Արևմուտքին միջամտել տարածաշրջանային գործընթացներին Բացի այդ, Հարավային Կովկասը չափազանց մեծ կարևորություն ունի Արևմուտքի համար նաև տրանսպորտահաղորդակցման ծրագրերի իրականացման առումով ԱՄՆ-ն և Եվրամիության երկրները հետևողական և նպատակաուղղված քաղաքականություն են իրականացնում Միջին Ասիայի էներգետիկ պաշարները Հարավային Կովկասով Արևմուտք հասցնելու համար Այդ միջոցով արևմտյան դիվանագիտությունը լուծում է միանգամից երկու չափազանց կարևոր խնդիր նախ փորձում է էներգետի անկախություն ձեռք բերել Ռուսաստանից և երկրորդը զրկում է Չինաստանի օրեցօր ուժեղացող տնտեսությունը էներգետիկ էժան պաշարներից·

Այս խնդիրների իրականացման համար Արևմուտքին անհրաժեշտ է, որպեսզի տարածաշրջանում կայունություն լինի Կայունությունն այս պարագայում Արևմուտքի համար ունի առաջնահերթ նշանակություն Այդ իսկ պատճառով նրանք փորձում են մեծացնել ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում, ինչը, իհարկե, սրում է հարաբերությունները տարածաշրջանի այլ գերտերությունների հետ:

Ռուսական դիվանագիտությունը, զգալով Կովկասում Արևմուտքի ազդեցության մեծացումը, ամեն կերպ փորձում է դուրս մղել իր հակառակորդներին մեր տարածաշրջանից: Այս առումով, Թուրքիայի առաջարկաց կայունության և համագործակցության պլատֆորմը բավական լավ տարբերակ է Ռուսաստանի համար, քանի որ այն չի ենթադրում ոչ տարածաշրջանային պետությունների մասնակցությունը կովկասյան քաղաքական գործընթացներին Իսկ այդ գործընթացները վրաց-ռուսական պատերազմից հետո հիմնականում հանգում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հակամարտության կարգավորմանը

Պաշտոնական Մոսկվան հասկանում է, որ Հարավային Կովկասում քաղաքական լուրջ դերակատարում ունենալու համար պետք է շահարկել ղարաբաղյան հիմնահարցը ԼՂՀ-ի ապագան որոշիչ դեր է խաղալու նաև ողջ տարածաշրջանի ապագայի համար: Այդ իսկ պատճառով ռուսական դիվանագիտության համար կարևոր նշանակություն ունի, թե ով վերջապես կլուծի արցախյան հարցը Ընդ որում այդ հակամարտության կարգավորման մեթոդները ամենևին էլ կարևոր չեն Ռուսաստանի համար կարևոր է միայն, որ նոր պատերազմ չսկսվի

Ակնհայտ է, որ Ռուսաստանի նոր քաղաքականությունը հարավկովկասյան տարածաշրջանում բացարձակապես ընդունելի չէ Հայաստանի և Արցախի համար: Պաշտոնական Երևանն իրավունք չունի թույլատրել, որպեսզի մեր ազգային շահերը վերածվեն գերտերությունների շահարկման առարկայի. Հետևաբար Հայաստանը պետք է վճռական ոչ ասի արցախյան հարցում զիջումներ ենթադրող ցանկացած տիպի առաջարկություններին.

ՎՐԱՑ-ՕՍԱԿԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԾԱԼԿԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Վահե ՍԱՐԳՍՅԱՆ

2008թ օգոստոսյան վրաց-օսական պատերազմը շարունակությունն էր Վրաստանի՝ խորհրդային կուսակցական մարմիններից ժառանգություն ստացված և միջազգային հանրության կողմից թյուրիմացաբար մինչ օրս ճանաչված սահմանների «խախտման», որն սկսվել էր ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր Վրաստանի իրավաբանական սահմանները, գիտակցաբար և անգիտակցաբար ճանաչվելով կամ չճանաչվելով տարբեր երկրների կողմից, ներկայումս (2008թ վրաց-օսական հետպատերազմյան շրջանում) իրականում մատնանշում են այն իրողությունը, թե տվյալ երկիրը պաշտպանում է ՌԴ-ի՞, Եվրամիության՞, թե՞ ԱՄՆ-ի ճամբարներում գտնվող երկրների դիրքորոշումները Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ԵՄ-ի արտաքին քաղաքականությունը դեռ իր ձևավորման փուլում է, և ԵՄ-ի անգլոսաքսոնական «բլոկը» շատ բաներով, այդ թվում իր արտաքին քաղաքականությամբ նույնական է ԱՄՆ-ի հետ, Վրաստանը դեռ փաստորեն բավականին երկար ժամանակ գտնվելու է ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների ծիրում

Մի բան հստակ է Վրաստանի՝ որպես պետություն գոյությունը վերջնականորեն կախված է տիրող քաղաքական իրավիճակից և աշխարհի այս կամ այն բևեռի ազդեցության ուժեղացումից

Ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանի կազմում եղած ինքնավարությունները իրենց այդ կարգավիճակներն ստացել են խորհրդային օրենքներով (1921թ հունիսի 16-ին Ինքնավար

Հանրապետության կարգավիճակ է ստացել Աջարիան[1], 1922թ ապրիլի 20-ին Ինքնավար Մարզի կարգավիճակ՝ Հարարավային Օսեթիան[2], 1931թ փետրվարի 19-ին Ինքնավար Հանրապետության կարգավիճակ է ստացել Աբխազիան[3]), ՎԽՍՀ ԳԽ-ի որոշումները (հետագայում նաև՝ Վրաստանի անկախության վերականգնման մասին ակտի ընդունումը), լիարժեք իրավական հիմք հանդիսացան ՎԽՍՀ-ի նախկին ինքնավարությունների՝ ՎԽՍՀ-ից առանձնացման համար

Վերոնշյալ որոշումներն իրենց ամրագրումները գտան 1990թ, երբ նույն թվականի մարտի 9-ին ընդունվեց ՎԽՍՀ Գերագույն Խորհրդի «Վրաստանի սուվերենության պաշտպանության երաշխիքների մասին» որոշումը, որում 1921թ կարմիր բանակի մուտքը Վրաստանի տարածք անվանվեց անեքսիա և օկուպացիա[4] Այս որոշումն ըստ էության մատնանշում էր ԽՍՀՄ օրենքների շրջանակներից Վրաստանի դուրս գալը ՎԽՍՀ

---

[1] Декрет N 54 Революционного комитета Грузинской ССР от 16 июня 1921г («Моамбе» 1921г, N 12) - об организации Социалистической Советской Автономии Республики Аджарии (статьи 2-10 признани утратившими силу постановлением Центрального Исполнительного Комитета Грузинской ССР от 10 апреля 1935г, N 32 (Сб зак и расп ГССР 1935г, N 35, ст 219)), /СВОД ЗАКОНОВ ГРУЗИНСКОЙ ССР том 1, Тбилиси, 1984/

[2] Декрет N 2 Всегрузинского советского центрального исполнительного комитета и совета народних комиссаров Грузии, от 20 апреля 1922г, («Моамбе» 1922г N 33) об организации Автономной Области Юго-Осетии (статьи 3-8 не приводятся как не содержащие норм, подлежащих включению в Свод законов Грузинской ССР) Վրաց-օսական հարաբերություններն առաջին անգամ լրջորեն արվեցին դեռ 1989թ, երբ նույն թվականի նոյեմբերի 10-ին Հարավային Օսեթիայի ԳԽ-ն որոշեց Ինքնավար Մարզը հռչակել Հարավային Օսեթիայի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն Վրաստանի կազմում տես Зверев А Этнические конфликты на Кавказе, 1988-1994 / Спорные границы на Кавказе / Москва 2002 с 48

[3] Постановление VI всегрузинского съезда советож рабочих крестьянских и красноармейских депутатов от 19 февраля 1931г (Сб Зак. И расп ГССР 1931г, N 9 ст 91) – о вхождении Социалистической Советской Республики Абхазии в Социалистическую Советскую Республику Грузии в качестве Автономной Республики (статья 2 не приводится как не содержащая норм подлежащих включению в Свод законов Грузинской ССР)

[4] Сокков А Ю, Внутриполитическая ситуация в Грузии / Грузия проблемы и перспективы развития, РИСИ, под редакциеи Кожокина Е М /, т 2, Москва, 2002, с 151

Գերագույն Խորհրդի այս հողի վրա կատարած հաջորդ քայլն էր 1990թ հունիսի 20-ի որոշումը, որով վերջինս անօրինական ճանաչեց պետական այն բոլոր պայմանագրերը և ստեղծված կառույցները, որոնք կնքվել էին "Վրաստանի օկուպացումից"՝ խորհրդայնացումից հետո[1] Դրանով ուժը կորցրած հայտարարվեց 1922թ ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը[2]

1918-1921թթ պետության իրավական հիմքի վրա ստեղծելով իր նորանկախ պետությունը[3], Վրաստանը մինչ օրս ոչ մի իրավական հիմքեր չի կարող ունենալ իր տիրապետությունը տարածելու ինչպես նախկին ինքնավարությունների, այնպես էլ խորհրդային շրջանում այդպես էլ գոնե ձևական ինքնավարություն չստացած Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի[4] վրա Վերջիններս 1921 թվականից՝ Վրաստանի խորհրդայնացումից առաջ, ոչ մի ձևով չեն գտնվել Վրաստանի Դեմոկրատական հանրապետության կազմում

1918 թվականի հանրապետության սահմանների հիմքի վրա 1991 թվականին անկախանալով, Վրաստանը մոլորության մեջ է գցել միջազգային հանրությանն ու Միավորված Ազգերի

---

[1] Նույն տեղում

[2] Мяло К Г Россия и последние воины xx века (1989 - 2000) К истории падения сверхдержажы, Москва 2002, с 109

[3] Այս հիմքի վրա, երբ 1995թ օգոստոսի 24-ին ընդունվեց նորանկախ Վրաստանի Սահմանադրությունը այն համարվեց 1921 թվականի անկախ Վրաստանի գոյության ընթացքում ընդունված Սահմանադրության իրավահաջորդ-ժառանգորդը Մնացած 1922, 1937 և 1978 թվականներին ընդունված ՎԽՍՀ Սահմանադրությունները մերժվում էին հետխորհրդային Վրաստանում տես "Свободная Грузия" 27 08 1996, հմմտ "Ազգ", 26 08 1995 Լրացուցիչ նշենք, որ մինչև Հայաստանի Հանրապետության նոր 1995թ հուլիսի 5-ի Սահմանադրության ընդունումը, երկրում գործել է 1975թ ընդունված ՀԽՍՀ Սահմանադրությունը

[4] Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանը Վրաստանին է բռնակցվել դարձյալ կոմունիստական կուսակցական մարմինների որոշմամբ 1921թ հուլիսի 16-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի որոշման ու ՎԽՍՀ-ի Կենտկոմի արված եզրակացության հիման վրա, տես Մելքոնյան Ա Ա, Ջավախքը 19-րդ դարում և 20 րդ դարի առաջին քառորդին Երևան, 2003, հավելված, փաստաթուղթ N 44 հմմտ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ հավաքածու 1, գ 7 թ 45

Կազմակերպությանը[1]՝ վերջիններիս կողմից ճանաչվելով ոչ թե 1918թ պետության սահմաններում, որոնք վիճելի և անորոշ էին, այլ Խորհրդային Վրաստանի սահմաններում, որոնք, ինչպես վերը նշեցինք, ձևավորվել էին կոմունիստական կուսակցական մարմինների կողմից և որոնք բացարձակ մերժվում էին նորանկախ Վրաստանի կողմից

Ներկա Վրաստանի սահմանները ճանաչելով Խորհրդային Վրաստանի սահմաններում՝ միջազգային հանրությունը շարունակում է մնալ հակասությունների ու մոլորության լաբիրինթոսում Վերջինս դրանով փաստորեն ճանաչում է վաղուց արդեն որպես միջազգային իրավունքի սուբյեկտ գոյություն չունեցող Խորհրդային Միության կուսակցական մարմինների՝ հենց նորանկախ Վրաստանի կողմից ուժը կորցրած որոշումները[2]

Այն իրողությունը, որ 1921թ կոմունիստական կուսակցական մարմինների կազմավորած սահմանների վրա անկախացած ներկա Վրաստանի կազմի մեջ ներառված էթնիկ տարածքային միավորումները ոչ մի բնական առնչություն չունեն Վրաստանի Կենտրոնի հետ և վերջինիս կազմում պահվում են արհեստականորեն, մի աքսիոմա է Այդ էթնիկ միավորումները գտնվում են կամ կգտնվեն Թբիլիսիի ազդեցության տակ միայն այն պարագաներում, երբ հզոր է Վրաստանի Կենտրոնը կամ հզոր են այն մեխանիզմները, որոնց ճնշման տակ վերջիններիս անխուսափելի հեռացումը Կենտրոնից առժամանակ հետաձգվում է

Սա ապացուցվեց մեկ անգամ ևս՝ 2008թ օգոստոսյան վրաց-օսական պատերազմում, երբ Վրաստանին չհաջողվեց վերականգնել իր կոմունիստական սահմանները, այն սահմանները, որից իրավաբանորեն հրաժարվել հենց ինքը՝ նորանկախ Վրաստանը Այդ մասին մեկ անգամ ևս վրաց պետական այրերի

---

[1] 1992թ հուլիսի 31-ին Վրաստանը դարձավ Միավարված Ազգերի Կազմակերպության 179 րդ անդամը տես՝ "Свободная Грузия", 01 08 1992

http //www bagin info/default asp?Lang=_Am&NewsID=1627&SectionID=0&Date=08/03 2008&PagePosition=1

կողմից ի լուր ողջ աշխարհի հայտարարվեց 2008թ օգոստոսի 12-ին Թբիլիսիում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ, երբ, ինչպես Վրաստանի նախագահ Միխաիլ Սահակաշվիլին, այնպես էլ Խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեն իրենց ելույթներում՝ դատապարտելով Ռուսաստանի Դաշնության ներկա քայլերը, նշեցին ԱՊՀ-ից դուրս գալու և, դրանով հանդերձ՝ Խորհրդային ժառանգությունից վերջնականորեն հրաժարվելու մասին «Մենք վերջնականորեն և ընդմիշտ պետք է հրաժեշտ տանք Սովետական Միությանը»,-նշեց իր խոսքում Մ Սահակաշվիլին[1] Արտաքինից կամ առաջին հայացքից «տաքացած հայտարարություններ» նշմարվող այս ելույթները իրականում իրենց մեջ կրում են խորքային իմաստներ Դա ակնհայտ է դառնում, եթե համապարփակ ուշադրություն դարձնենք նորանկախ Վրաստանի՝ դեռ անկախացման սկզբից (Զ Գամսախուրդիայի վարչակարգի ժամանակներից) կատարած քայլերին, որոնց ճշգրիտ ու հաշվարկված ընթացքն է Վրաստանի ներկա ընթացքը Իսկ Մ Սահակաշվիլու ելույթներն ու որդեգրած քաղաքական կուրսը շատ բաներով չեն տարբերվում Զ Գամսախուրդիայի դիրքորոշումներից

Ներկայումս, երբ անդրկովկասյան տարածաշրջանում կարծես թե վերականգնվել է 2008թ օգոստոսին խաթարված հարաբերական անդորրը, Վրաստանի, ինչպես նաև վերջինիս փաստացի տարածքում գտնվող էթնիկ ազգերի և ժողովուրդների շուրջ ստեղծվել է նոր իրադրություն Սխալված չենք լինի, եթե

---

[1] Տես http //www civil.ge/rus/article php?id=17276&search= Իսկ Խորհրդարանի նախագահ Դ Բաքրաձեն մասնավորաբար նշեց «Այն, որ մենք թույլ չտվեցինք (Ռուսաստանի Դաշնությանը – Վ Ս) ներկայումս իրականացնել 1921թ սցենարը (երբ Վրաստան մտավ Կարմիր բանակը և հանրապետությունը միացվեց Սովետական Ռուսաստանին) դա հերոսություն է» Տես հմմտ http //www.regnum.ru/news/fd-abroad/georgia/1040387.html. Ռուսաստանի Դաշնության կողմից 1921թ ծրագրի իրականացման և, դրանով իսկ Վրաստանի անկախության ու որպես իրավական սուբյեկտի վերացման մասին հայտարարությամբ 2008թ օգոստոսի 13-ին հանդես եկավ դարձյալ Մ Սահակաշվիլին հեռուստատեսության միջոցով երկրի ազգաբնակչությանն ուղղված դիմումի մեջ Տես http //www apsny ge/news/1218699600 php, հմմտ http //www civil ge/rus/article php?id=17306&search=

նշենք, որ այս տարածաշրջանում մենք գործ ունենք բոլորովին նոր Վրաստանի հետ Ճիշտ է, մինչ պատերազմն էլ արդեն թե այնպես, Վրաստանը աննշան տարբերություններով գրեթե վերահսկողություն չուներ այսօր արդեն իրավաբանորեն անկախ դարձած Աբխազիայի և Հարավային Օսեթիայի վրա այնպես հանդերձ այս՝ արդեն իրավական հանրապետությունները մեծ բեռ էին Վրաստանի համար Վրաստանի իշխանությունները սանձազերծելով 2008թ օգոստոսյան պատերազմը, ինչ-որ իմաստով նաև սեխանիկաբար իրականացրեցին իրենց իշխանության ամրապնդմանը նպաստող «պարտավորություն-ների» կատարումը Միաժամանակ, Հարավային Օսեթիայի վրա վրացական հարձակման «համարձակությունը» բխում էր նաև մի շարք կարևոր ու ոչ պատահական հանգամանքներից Ըստ հայտնի քաղաքագետ Ի Մուրադյանի՝ առկա էր Հարավային Օսեթիայի վրա հարձակման պայմանավորվածություն՝ ՌԴ-ի քաղաքական շրջանակներից Ե Պրիմակովի խմբավորման հետ Ըստ քաղաքագետի Ե Պրիմակովն իր գործունեությունն արդարացնելու նպատակով համոզել է վրացիներին, որ ռուսական 58-րդ բանակը հատուկ ծրար չունի և չի կարող հրաման ստանալ Վրաստանի տարածք ներխուժելու համար, և դա իբր Ե Պրիմակովի և իր գործընկերների մեծագույն ծառայությունն է Վրաստանին Ի Մուրադյանն առանձնացնում է նաև երկրորդ տարբերակը, որ Ե Պրիմակովի կապերն օգտագործելով, ռուսական հատուկ ծառայություններն ամեն ինչ արեցին Վրաստանի ղեկավարությանը համոզելու համար, որ Թբիլիսիի կողմից աբխազական և հարավօսական խնդիրները ուժային ճանապարհով «կարգավորելու» դեպքում ռուսական բանակը չի միջամտելու «Համենայն դեպս, Հարավային Օսեթիայի նկատմամբ ուժային գործողության կիրառումից առաջ վրացական ղեկավարությունը համոզիչ ապացույցներ է ստացել թե Ռուսաստանը վճռականություն չի ունենա դիմելու բացառապես ռազմական միջամտության»[1] Այս հանգամանքն

Մուրադյան Ի Ռուս-վրացական պատերազմի փակ էջերը «Գարդեն» ամսագրի տպագրումը 23/09/2008

քով կարելի է բացատրել նաև պատերազմի առաջին պահերին Ռուսաստանի «անհասկանալի» լռությունը

Բոլոր դեպքերում Վրաստանը գնաց պատերազմի ճանապարհով խնդիրը «կարգավորելու» ուղիով, որը միաժամանակ բացահայտեց մի շարք կոծկված իրողություններ Նախ՝ չափազանց կարճ ժամանակամիջոցում վրացական, մինչ այդ պրոֆեսիոնալի համբավ ունեցող բանակը քայքայվելով հասավ կազմալուծման եզրին Սա ապացույցն էր այն բանի, որ ամերիկա թուրքական լայնածավալ ներդրումները[1] (ներառյալ նաև իսրայելականը) վրացական ռազմական ոլորտում՝ իրականում չեն տալիս սպասված արդյունքները Դրա հիմնական պատճառներից է ոչ այնքան վրացական սպայակազմի պատրաստվածության ցածր մակարդակը, այնքան այդ ջրջանակներում առկա հոգեբանական գործոնները Ինչքան էլ Մ Սահակաշվիլին իր զորքի առաջ հանդես գար կրակոտ ու հայրենասիրական ճառերով, այնուամենայնիվ անհնար եղավ բանակում վերացնել պատմական ճշմարտություն հանդիսացող այն կարծրատիպը որ իրենք կռվում են միայն պարզապես ինչոր պլան իրագործելու համար, այլ ոչ թե «հանուն պատմական հայրենիքի ազատագրման» Աբխազիան և Հարավային Օսեթիան արդեն վաղուց վերածվել են վրացական իշխող վերնախավի համար հայրենասեր և պետականակերտ քաղաքական գործիչ երևալու առթիվ տրվող հայտարարությունների

տես http //www idefacto am/page php?section=1&page=20 Նշված «Կոպրեկ» նախագիծը Ե Պրիմակովի Վրաստանի ուղղությամբ կատարած գործողությունն կարճ անվանումն էր

[1] Ըստ հայկական վերլուծական շրջանակների տեղեկությունների վերջին 5-6 տարիների ընթացքում Թուրքիան զգալի ռազմաքաղաքական աջակցություն է ցուցաբերել Վրաստանին (ըստ վերլուծաբանների դրանց ծավալները կազմում են մոտ 480 մլն ԱՄՆ դոլար) Թուրքիան այդ ընթացքում ձեռք է բերել Վրաստանի Մառնեուլի եւ Բաթումի ռազմաբազաների նկատմամբ լիիրավ վերահսկողություն Թուրքական կողմի աջակցությամբ Վրաստանն Իսրայելից գնել է 20-ից ավելի անօդաչու հետախուզական ինքնաթիռներ Տես Խաչատրյան Ա Թուրք վրացական վտանգավոր ռազմախաղեր 28 08 2008 http //www 168 am/am/articles/15277

անսպառ աղբյուրի Այս ամենը լսվ են գիտակցում հասարակ միջավայրում, միաժամանակ՝ վրացական հասարակության հարաբերական պասսիվ պահվածքը նաև ՌԴ-ի կողմից լայնամասշտաբ վտանգ չտեսնելու հանգամանքն էր Այս ամենին ապացուցելու եկան հետպատերազմյան իրավիճակում ՌԴ-ի կողմից կատարված քայլերը, երբ վերջիններս ոչ վտանգ չներկայացրին հասարակ ժողովրդի համար՝ բավարարվելով միայն ռազմական հենակետերի ոչնչացմամբ և վրացական գործողություններին պատասխանելով

Ներկայիս ստատուս քվոյի վերականգնված վիճակը, կարելի է ասել, լիովին ձեռնտու է նաև ԱՄՆ-ի ճամբարի երկրներին Չավերելով Վրաստանով անցնող կոմունիկացիաները, Ռուսաստանը մեծ չափով նպաստեց այդ կոմունիկացիաների «տերերին»՝ Վրաստանում պահպանելու իրենց նախկին դիրքը, միաժամանակ երկրում պահպանվեց արևմտամետ վարչակարգը Վրաստանի նախկին վարչապետ Զ Նողայիդելու ներկայիս փորձերը՝ երկրում ձևավորելու այլընտրանքային ուժ, դեռ հեռու են այս կամ այն բևեռի վստահությանն արժանանալու հանգամանքից Իրականում ԱՄՆ-ին այնքան էլ չի հետաքրքրում Վրաստանի «երկարաժամկետ» կայունությունը կամ, այսպես ասված, պայծառ ապագան Մեկ նախադասությամբ ասված՝ Վրաստանը որպես պետություն գոյատևելու երաշխիքներ ունի այնքաս ցավանակ, քանի դեռ Ադրբեջանում չեն սպառվել նավթի և գազի պաշարները Վերլուծաբանների գնահատմամբ՝ այդ ժամկետը կամ Վրաստանի «կյանքի տևողությունը» այնքան էլ երկար չի Այն գազմում է 20-25 տարի[1]

Վրաց-օսական պատերազմը տարբեր հասարակական-քաղաքական շրջանակներում Վրաստանի ֆեդերալացման մասին խոսակցություններին մեծ թափ հաղորդեց Վրաստանի դաշնայնացման մասին խոսակցությունները հենց այնպես չեն

[1] http //www idefacto am/page php?section 1&page=27

տեղի ունենում Ռուսաստանյան կողմի՝ տարբեր վայրերում նախաձեռնած կոնֆերանսներն ու դրանցում հասարակական ամենալայն շերտերին ընդգրկելը ցույց են տալիս, որ ներկայումս ընթանում է դաշնայնացմանը նախորդող գործընթացը, երբ շեշտը դրվում է հասարակական կարծիք ձևավորելու վրա Վրաստանի դաշնայնացման գաղափարին կողմ են արդեն նույնիսկ վրացական առանձին ներկայացուցիչները, հատկապես նրանք, ովքեր հանդես են գալիս երկրի գործող վարչակարգի դեմ Այդպիսի պրոցեսների մասին են խոսում 2008թ Հոկտեմբերի 31-ին Անկարայում տեղի ունեցած «Հարավային Կովկասի անվտանգության նոր ճարտարապետությունը 2008 թ օգոստոսի 8-ից հետո» թեմայով կլոր սեղանին մասնակցած վրացական փորձագիտական շրջանակների ներկայացուցիչների ելույթները

Վրաստանի վաղ թե ուշ դաշնայնացման այս թոհուբոհում միանգամից խոսքը գնում է այնտեղ, թե իրականում որոնք են լինելու ֆեդերացիայի միավորները Այդպիսիք, կարելի է ասել, արդեն ասպարեզ են դուրս եկել վաղուց, որոնցից՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանը հանդես եկավ Վրաստանի դաշնայնացման և սեփական ինքնավարություն ստանալու պահանջով՝ դեռ վրաց-օսական պատերազմի «ավարտական» փուլում[1] Այստեղ կարևոր է նշել մեկ կարևոր հանգամանք Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանը դեռ 1994թ՝ երկրի վարչատարածքային բաժանման օրերից մասնատված է երկու մասի Ծալկան ներառելով հիմնականում աղրբեջանաբնակ Քվեմո-Քարթլի նահանգի մեջ՝ Վրաստանը սրանով բացառել էր հայկական այս տարածքներում միասնական ճակատի ձևավորումը Մյուս կողմից, մեկ ամբողջական նահանգ դիդարկելով և հանդես գալով Քվեմո-Քարթլիի ինքնավարության պահանջով, աղրբեջանական հանրության մոտ արդեն ձևավորվել է Ծալկան ապագա աղրբեջանական ինքնավարու-

---

В беседе с армянами Самцхе-Джавахети поднят вопрос об автономии в составе Грузии http://www.regnum.ru/news/fd-abroad/georgia/1043811.html.

թյան մեջ ներառելու տեսլականը Այս հողի վրա Վրաստանը կարող է պատճառը և ականատեսը դառնալ հայ-ադրբեջանական կոնֆլիկտի, որից վերջինս կարող միմիայն օգուտներ քաղել Սրանով Վրաստանը հայկական և ադրբեջանական՝ հանուն ինքնավարության (սպասվում չի բացառվում նաև՝ անկախության) պայքարների ուժային վեկտորները Թբիլիսիի ուղղությունից ինչ-որ չափով տեղափոխեց միմյանց դեմ, որտեղ միաժամանակ հնարավոր է բացառվի հայ-ադրբեջանական հնարավոր դաշինքի ձևավորումը

Սամցխե-Ջավախք-Ծալկա հայկական կողմի համար բոլոր դեպքերում անթույլատրելի է ինքնավարության համար պայքարում Ծալկայից հրաժարվելը, որը հանգեցնելու է տարածաշրջանի ռազմաստրատեգիական դիրքի լրջագույն կորստի Ծալկայի ռազմաստրատեգիական դիրքը համեմատելի է Արցախի հյուսիսային մասերի, մասնավորաբար՝ Հյուսիսային Արցախի (Եվլախ, Գանձակ (Գյանջա), Ղազախ) և Շահումյանի շրջանի հետ Այս համեմատությունն ավելի է ընդգծվում, եթե հաշվի անենք այն հանգամանքը, որ Հյուսիսային Արցախով անցնող և տարածաշրջանի զարկերակը հանդիսացող կոմունիկացիաներից երկուսը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ուավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը շարունակաբար անցնում են նաև Ծալկայի տարածքով Արցախյան շրջանամարտում հայկական կողմի անհեռատես գործելակերպի հետևանքով Արցախը կորցրեց ոչ միայն իր հյուսիսային տարածքները, այլև զուրկ մնաց տարածաշրջանի կյանքի զարկերակը հանդիսացող կոմունիկացիաների վրա ազդելու հնարավորությունից Այժմ այդ նույն և շատ կարևոր սխալը կրկնելու շեմին ենք Ներկայումս քանի դեռ այդ կոմունիկացիաների վրա կա դեռևս ինչ-որ չափով հայաբնակ Ծալկայի հատվածը այն հայկական կողմի համար լուսավոր առիթը կարող է հանդիսանալ ինչ-որ տեղ և ինչ-որ չափով ազդելու բարձրաստիճանների վրա Ընդհակառակը, բոլորովին ուշադրություն չդարձնելով Ծալկայի այս դերին, դուրս թողնելով այն Սամցխե-

Զավախքի շրջանակներում կատարվող գործընթացներից և թույլ տալ, որ Վրաստանի վարած քաղաքականությունը վերջնականորեն հայաթափի շրջանը, հայկական կողմը պարզապես քսան տարի անց կրկին մատնանշելու է սեփական անվտանգության և ազդեցիկ պետություն դառնալու ուղղությամբ տարվող քաղաքականության բացակայությունը

Ծալկայի մասին խոսելիս չի կարելի չառանձնացնել խնդրի բարոյական կողմերը՝ պատմական հայկական գավառ (Թռեղք գավառ) և ներկայումս հայերով կոմպակտ բնակեցված լինելու պարագաներ՝

Հետպատերազմյան ստատուս քվոյի վերականգնումը Սամցխե-Զավախք-Ծալկա տարածաշրջանի շուրջ կատարվող իրադարձություններին կարծես ստիպեց «վերադառնալու» նախկին ելակետային դիրքերին Ռուս-թուրքական տակտիկական մերձեցումներն իրականում երկկողմանի փորձեր էին Ռուսաստանի պարագայում թուրք-հայ-ադրբեջանական երկխոսությանը թափ հաղորդելու միջոցով ուժեղանալու Անդրկովկասում իսկ Թուրքիան հանդես գալով հաշտարարի և խաղաղաստերի դիրքերից՝ ինչ-որ տեղ ձգտեց հատկապես ԵՄ-ի հետ «խոսել» առավել վստահ դիրքերից Ինչպես «Նոյան տապանի» թղթակցի հետ զրույցում նշել է սեպտեմբերի 10-13-ը լեհական Կրինիցա քաղաքում անցկացված «Եվրոպայի տնտեսական ֆորումի» մասնակից, Եվրոպայի հայկական միությունների ֆորումի նախագահ Աշոտ Գրիգորյանը (Սլովակիա), Վրաց-օսական պատերազմի հենց սկզբում Թուրքիայի ցուցաբերած նախանձելի ակտիվությունը տվել է հսկայական պտուղներ նաև, պայմանականորեն ասված, վերջինիս «ասիական» քաղաքականության համար Թուրքիան խցկվել է Հարավային Կովկասի տերությունների արանքը՝ զարմանալիո-

րեն ստանալով ակտիվ գործելու եւ իր ծանրակշիռ խոսքն ասելու Ռուսաստանի համաձայնությունը[1]

Տարածաշրջանի քաղաքական զարգացումների դեպի ելակետային դիրքեր վերադառնալն ստիպեց Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի քաղաքական-հասարակական շրջանակներին այսպես ասած՝ «հաշտվել» ստեղծված իրադրության հետ Դա է վկայում վերջիններիս շրջանակներում ներկայացուցիչ տիրող համեմատական հանգստությունը Ընդհանրապես այս երևույթը բնորոշ է Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի քաղաքական ներկայացուցիչներին դեռ 1990-ական թվականներից սկսած Տարածաշրջանի այսպես կոչված լիդերները մշտապես եղել են այս կամ իրադարձությանը շատ դեպքերում իրար հակասող և ուշացած հայտարարությունների տեսքով արձագանքողի դերում

Կախված արտաքին ուժերի շահերի վերադասավորումից այնուամենայնիվ Վրաստանի առնվազն դաշնայնացումը լինելու է մշտական օրակարգային հարց Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, թե Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանը որքանով է պատրաստ «ստանալու» այդ «նվերը», և քաղաքական պայքարում հայկական կողմից ինչպիսի ուժերի ներգրավվածություն է հնարավոր Ելնելով մինչ օրս քաղաքական դաշտում առկա ուժերից, կարելի է նշել, որ այս տարածաշրջանում հայկական կողմից ակտիվ են միայն մոտ երեք տասնյակ (ընդհանուր թվով՝ 32)[2] հասարակական կազմակերպություններ և միություններ[3] 2005 թ հիմնադրված և

---

[1] http //yerkir am/news/?id=107

[2] Տվյալները մեզ է տրամադրել Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի ներկայացուցիչ, A info լրատվական գործակալության (կայքէջ www a-info org) տնօրեն Արտուր Գաբրիելյանը

[3] 2003թ ստեղծվեց Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը, որը գործում է մինչ օրս Այս կազմակերպության մեջ բացի Սամցխե-Ջավախքի հասարակական կազմակերպություններից, նաև մտած են, փաստորեն, Քվեմո Քարթլի հանրապետության կազմում գտնվող Ծալկայի հայկական հասարակական կազմակերպությունները

տարածաշրջանում քաղաքական ուժ հանդիսացող «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը Վրաստանի ակտիվ քայլերի և ՀՀ-Վրաստան փոխպայմանավորվածության արդյունքում դադարեց գոյատևելուց Բոլորովին չնսեմացնելով կազմակերպության առանձին անդամների հայրենասիրական մղումները, այդուհանդերձ, «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի նախկին մի քանի կարկառուն անդամների ներկա, այսպես ասած՝ «պասսիվ» դիրքորոշումը, խոսում է այդ կազմակերպության՝ որոշ ուժերի կողմից շահագործված լինելու մասին

Հայկական այս, մեծամասամբ թույլ կազմակերպություններին «ընդդեմ» Սամցխե-Ջավախք-Ծալկայում գործում են վրացական և Վրաստանի խողովակներով գործող մոտ 250 ոչ կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ)[1] Այս կազմակերպությունների «քայլարշավը» հիմնականում ուղղված է տարածաշրջանը Վրաստանին ինտեգրելուն, վրաց լեզուն և մշակույթը հայկական միջավայրում տարածելուն Կարճ ասած՝ Վրաստանի դաշնայնացման գործընթացում վերոնշյալ վրացական ներկայությունը լուրջ խոչընդոտ է դառնալու հայկական կողմի ձեռնարկած ցանկացած քայլի

Մեր այս վերջին էքսկուրսի եզրակացությունն այն է, որ Սամցխե-Ջավախք-Ծալկան առայժմ մնացել է վերոնշյալ մոտ երեք տասնյակ թույլ գործող (կամ գրեթե չգործող) կազմակերպությունների հույսին Պարզ է, որ այս կազմակերպությունները իրենց հետևից չեն կարող տանել ժողովրդական լայն

Տվյալ խորհրդի կազմում փաստորեն, փորձ արվեց միավորել Սամցխե-Ջավախք Ծալկա տարածաշրջանում մինչ այդ առանձնաբար գործող հայկական հասարակական կազմակերպություններին

[1] ՄԱԿ ի Զարգացման Ծրագրերի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն 2004թ տվյալներով Սամցխե-Ջավախքում գրանցված էին 236 գրանցված ոչ կառավարական կազմակերպություններ /ՈԿԿ/, որոնցից 96-ը Ախալցիխեի շրջանում է 34-ը Ադիգենում, 21-ը Ասպինձայում, 42-ը Բորժոմում, 32-ը Ախալքալաքում և 11-ը Նինոծմինդայում Տես Samtskhe-Javakheti Realities and Perspectives UNDP Tbilisi, 2004, p 53

զանգվածների Վերջիններս չեն կարող «հույս ներշնչել» նաև արտաքին ուժերի համար Չնայած այս հանգամանքին, Ռուսաստանի կողմից 2008թ օգոստոսյան օրերին անգամ փորձ արվեց վրաց-աբխազական և վրաց-օսական ճակատներին զուգահեռ բորբոքել և երկու ստանձին ճակատ ստեղծել նաև Վրաստանի հարավում հայկական Սամցխե-Ջավախք-Ծալկայի և ադրբեջանական շրջաններում Այս ծրագիրն իրականացնելիս փորձ արվեց հիմնվել վերոնշյալ Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների վրա Այդ ծրագիրն իրականացվում էր ռուսաստանյան «Եվրազիա» հիմնադրամի միջոցով, որի կայքէջում (www evrazia org) գրեթե ամեն օր տեղադրվում էին ապատեղեկացնող նյութեր, ըստ որոնց, իբր թե հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի ներկայացուցիչ Արտակ Գաբրիելյանը սկսել է զինյալ ապստամբություն վրացական կառավարության դեմ, որի արդյունքում հայ ապստամբներն արդեն հասցրել են սպանել մի քանի տասնյակ վրացի ոստիկանների Կայքի ամենօրյա հաղորդումներում նշվում էր, որ հայ ապստամբները պայթեցրել են մի շարք կառավարական շենքեր, համագործակցում են ադրբեջանցի անջատողականների հետ և արդեն շուտով կհայտարարեն Սամցխե-Ջավախքի անկախությունը Ընդ որում՝ այս գործընթացում փորձ էր արվում ներքաշել նաև պաշտոնական Երևանին Նույն կերպ ապատեղեկատվություն էր տարածվել նաև ադրբեջանցիների պարագայում, օրինակ՝ օգոստոսի 29-ի տեղեկատվության մեջ նշվում էր, որ իբր Քվեմո Քարթլիի ադրբեջանցիների առաջնորդներից մեկը «Հեյրաթ» ժողովրդական շարժման ղեկավար Ալիբալա Ասկերովը, բարձրացրել է Վրաստանի ադրբեջանցիների անկախության հարց Եթե ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ «Եվրազիա» հիմնադրամի խմբագիր, ՌԴ-ի հայտնի քաղաքագետ Ալեքսանդր Դուգինը բավական մեծ ազդեցություն ունի Ռուսաստանի քաղաքագիտական մտքի վրա, Դուգինի գրքերը յուրահատուկ դասագիրք են հանդիսանում Ռուսաստանի արտաքին քաղաքա-

կանությունը մշակող փորձագետների համար, միաժամանակ՝ Իսրաելը և Թուրքիան վերջին շրջանում բավական ակտիվ համագործակցություն են սկսել եվրազիականության գաղափարախոսության առաջնորդներից՝ նույն Ա Դուգինի հետ, կարելի է եզրակացնել, որ այդ շրջանում Թուրքիայի ճամբարի երկրները ևս հրաժարվել էին իրենց «ավանդական» վրացամետ դիրքորոշումից Այս հանգամանքի ապացույցն էր վրաց-օսական պատերազմի հատկապես սկզբնական շրջանում Բոսֆորի նեղուցի փակումը ՆԱՏՕ-ի զորքերի առաջ[1] Միայն հետագայում էր, որ Թուրքիան, այսպես ասած, «հիասթափվելով» Ռուսաստանից, նորից վերադարձավ իր նախկին դաշնակից-տիրոջ՝ ԱՄՆ-ի գիրկը, վերջինիս առջև բացելով Բոսֆորը

Ի վերջո, գիտակցելով Սամցխե-Ջավախք-Ծալկայի վերոնշյալ հասարակական-քաղաքական կազմակերպությունների վրա հիմնվելու անհուսալիությունը, Վրաստանի թուլացման կամ դաշնայնացման գործում մեծապես շահագրգիռ Ռուսաստանը ձգտում է ստեղծել կամ գտնել տարածաշրջանով զբաղվող այլընտրանքային ուժերի Հայ քաղաքագետ Ի Մուրադյանն, օրինակ, գտնում է, որ վերջին երկու տարիներին Ռուսաստանին հաջողվել է տեղական բնակչության մեջ ձեռք բերել նոր կադրեր, որոնց տարիքը չի անցնում 35-ից, քանի որ ավելի ավագ սերունդն այլևս ընդունակ չէ կատարելու դրված խնդիրները Միաժամանակ, հղում անելով Ախալքալաքի նախկին բուզայում ՌԴ ԱԴԾ խմբավորման աշխատակիցների խոստովանությունները, քաղաքագետն ավելացնում է, որ ո՛չ հին, ո՛չ էլ նոր ցանցն ընդունակ չէ իրագործելու դրված խնդիրները Այնդուհանդերձ Ի Մուրադյանը չի ժխտում ռուսական միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի և դրանցից բխող գործողությունների իրականացումները Սամցխե-Ջավախք-Ծալ-

[1] Այս հողի վրա Թուրքիայի վարչապետ Ռ Էրդողանի ակտիվացումը որոշ շրջանակներ կապում են այն հանգամանքի հետ, որ վերջինս ձգտում էր Թուրքիայի չեզոքության, Բոսֆորը փակ պահելու դիմաց ձեռք գցել Նախիջևանը Տես Սարգսյան Ա, Թուրք-վրացական վտանգավոր ռազմախաղեր, 28 08 2008, http //www 168 am/am/articles/15277

կայում[1] Այս հողի վրա ՀՀ արտաքին քաղաքականությունը, իբրև ՌԴ մեծ քաղաքականությանը մեծամասամբ համընկնող գործոն, սպասելի է, որ իր սուր ծայրով ուղղվի Սամցխե-Ջավախք-Ծալկայի «զարթոնքին» Այդ հանգամանքն են փաստում վերջին շրջանում ստեղծված Սփյուռքի նախարարության կողմից վերոնշյալ տարածաշրջանի ուղղությամբ կատարվող չնայած դեռ շատ անորոշ և հայեցակարգային հողի վրա չգտնվող, սակայն ակտիվացման միտում ունեցող քայլերը Հարկ է նշել, որ ինչպես Սփյուռքի նախարարության, այնպես էլ ՀՀ հասարակական-քաղաքական գործիչների հայտարարությունները, որոնց միջոցով փորձ է արվում, այսպես ասած՝ բարձրաձայնել Սամցխե-Ջավախք-Ծալկայի խնդիրը, խիստ ցածրորակ են Վերջիններս հիմնականում ձևավորվում են ապատեղեկատվության և երևակայությունների հիմքի վրա, որոնց հեղինակները հիմնականում վերջերս են ինչ-որ տեղից լսել վերոնշյալ տարածաշրջանի մասին Այդ շրջանակները Սամցխե-Ջավախք-Ծալկան համարում են հայրենասեր երևալու և ինչ-ինչ քաղաքական դիվիդենտների կուտակման «նոր հայտնաբերված» միջոց Այս հողի վրա կարելի է բազմաթիվ նմանություններ և ընդհանուր գծեր տեսնել հայկական և վրացական շրջանակների մոտ Երկուստեք մեծ է ձգտումը՝ շահարկելով տարածաշրջանը, քաղաքական դաշտում հասնել բարձունքի Մեծ է նմանությունը նաև այն բանում, որ և ՀՀ, և Վրաստանի քաղաքական բոլոր շրջանակները (այդ թվում նաև ծայրահեղ ազգայնական համարվողները) հիմնականում չեն շեղվում սեփական պետությունների որդեգրած դիրքորոշումներից

Այս ամենով հանդերձ, հայկական քաղաքական շրջանակներում դեռ մեծ է Ռուսաստանի գոնե այս հարցում փոփոխական դիրքորոշման վերաբերյալ վախի զգացողությունը, ինչը վերջիններիս չի կարող վերջնական վստահություն

---

[1] Մուրադյան Ի , Ռուս-վրացական քաղաքականությունը Ջավախքում, 17/10/2008, http //www idefacto am/page php?section=1&page=12

ևևրշնչել Կարճ ասած ՀՀ-ում Սամցխե-Ջավախք-Ծալկայի հանդեպ իրականացվելիք գործողությունները դեռ չեն «կնքվել» ռուսական երաշխիքներով Այս ամենից ելնելով ՀՀ-ն Վրաստանի հանդեպ առաջին հայացքից դեռ հանդես է գալիս ավանդական-բարիդրացիական դիրքերից, սպասելով դեպքերի զարգացմանը Այս ավանդական-բարիդրացիական հողի վրա ՀՀ-ն Սամցխե-Ջավախք-Ծալկայի հարցը վերջին շրջանում փորձում է կարգավորել հայ-վրացական պայմանավորվածություններից ծնված որոշ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների միջոցով Այդ կազմակերպությունների ներկայացուցիչներին տրված են, կարելի է ասել, անսահմանափակ լիազորություններ և հայկական, և վրացական պետական մարմինների կողմից, որպիսի վերջիններս գործեն առավել անկաշկանդ և Սամցխե-Ջավախք-Ծալկայի հարցը առաջ տանեն՝ համաձայն հայ-վրացական փոխպայմանավորվածության Այդ կազմակերպությունները ակտիվորեն ֆինանսավորվում են և ՀՀ պետական բյուջեի, և օտարերկրյա (հիմնականում ռուսական) կապերի միջոցով

2008թ վրաց-օսական պատերազմը Վրաստանի համար գրեթե անփոխարինելի դարձրեց Սամցխե-Ջավախք-Ծալկայի դերը Վրաստանն արդեն պարզորոշ գիտակցում է Թբիլիսին Բաթումին և արևմտյան Վրաստանին կապող ներկա ճանապարհի խիստ անհուսալի և վտանգավոր լինելը Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դեռ վերջնականորեն չի ավարտվել վրաց-օսական հակամարտությունն ու այս հիմքի վրա չի բացառվում, որ Ռուսաստանը նորից ձեռնամուխ լինի Գորիի (հետևաբար նաև՝ Թբիլիսի-Բաթում ճանապարհի) տարածքի վրա անվտանգության գոտու ստեղծմանը, ապա պարզ կդառնա, որ Վրաստանի համար օրվա խնդիր է դառնում որոնել այս ճանապարհին այլընտրանք հանդիսացող մեկ այլ ճանապարհ՝ ի դեմս Բաթում-Ախալցխա-Ախալքալաք-Նինոծմինդա-Ծալկա-Թիֆլիս ճանապարհի

Որ այս ճանապարհը Վրաստանը կառուցում է ստիպված և հայ-վրացական շահերի համընկնումն ու հնարավոր բարգավաճումն այստեղ զուտ «անցանկալի պատահականություն են», ապացուցում են բազմաթիվ փաստեր մինչ օրս աղետալի դրության մեջ է գտնվում Նինոծմինդա-Բավրա (ՀՀ-Վրաստան սահմանակետ) 22 կմ-ոց հատվածը ՀՀ-Վրաստան «նախանձելի» բարձրաձայնվող հարաբերությունների մեջ գտնվող քաղաքացիները մինչ օրս միմյանց հետ շփվում են միջնադարյան ճանապարհներով, մինչ օրս խոսք անգամ չկար Սամցխե-Ջավախք-Ծալկա հայկական տարածաշրջանը Բաթումի նավահանգստի հետ կապող Ադիգեն-Խուլո-Շուախև-Բաթումի 70 կմ-ոց հատվածի շինարարության մասին, որը պետք էր, որ հետաքրքրեր Վրաստանին՝ առաջին հերթին որպես իր ներքին զարգացման խթան Այդ մասին խոսվեց այն ժամանակ, երբ Վրաստանի համար չկա այլևս այլընտրանք Այստեղից էլ այն հետևությունը, որ իր մասնիկը համարած Սամցխե-Ջավախք-Ծալկա հայկական տարածաշրջանին օտարել է իր կազմից հենց ինքը՝ Վրաստանը[1]

Ելնելով այս պայմանագրին հաջորդող ներկա հարաբերական լռությունից, կարելի է կանխորոշել, որ ՀՀ-ին դեռ երկար ժամանակ է հարկավոր էժան և հարմարավետ տարբերակով ծով դուրս գալու համար Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն կառուցվում է Թբիլիսի-Ծալկա-Նինոծմինդա հատվածը, և բոլորովին քայլեր չեն արվում Նինոծմինդա-ՀՀ սահման հատվածի շինարարության

[1] Վրաստանը նույն քաղաքականությունն էր իրականացնում նաև 1918թ , երբ մի կողմից Ախալցխայի, Ախալքալաքի գավառները և Խրամի (Ծալկա) շրջանը հայտարարել էր իր անբաժան մասնիկները և ձգտում էր ամեն գնով տիրանալ վերջիններիս, մյուս կողմից, երբ թուրքական զավթիչները վերոնշյալ շրջանները Արևելյան Հայաստանի մաս դիտելով և ներխուժելով այստեղ ցեղասպանեցին տեղի հայությանը Վրաստանը հետ քաշվելով հրաժարվեց պաշտպանել ինչպես այդ գավառները, այնպես էլ իրենը համարած տեղի բնակիչներին Ավելին 1918թ Յեղասպանությունը, որն իրականացվեց կողմից Ախալցխայի և Ախալքալաքի գավառների նկատմամբ, կազմակերպվեց վրացական կառավարության անմիջական մասնակցությամբ

ությամբ, կամաց-կամաց հստակ է դառնում, որ ՀՀ-ն պարտվել է նաև այս խաղում Այստեղ, սակայն, ՀՀ-ի պարտությունը կարող է լինել վերջինիս համար շրջադարային և շատ վտանգավոր Այս պնդումն ավելի հիմնավոր կդառնա, եթե հաշվի առնենք տարածաշրջանում մի քանի ակտիվ գործընթացներ Դրանցից կարևորագույնը Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի մուսուլմանացման գործընթացն է, որը կարող է առավել խթանվել, եթե ավարտին հասցվի Թբիլիսի-Ծալկա-Սինոծմինդա-Ախալցխա-Բաթում ավտոմայրուղին Վերակառուցվող ճանապարհը աննախադեպ կերպով Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում մեծացնելու է աղրբեջանական գործոնը, որի հիմքերն արդեն դրված են Նկատի ունենալով, որ Ծալկայում առկա են չորս աղրբեջանական գյուղեր[1], և ճանապարհային կապի վերագործարկման հետևանքով Ծալկան սերտորեն կապվելու է Սամցխե-Ջավախքի հետ աղրբեջանաթուրքական քաղաքականությունը սրնթաց մտնելու է նաև հայկական տարածաշրջանի նաև այս հատվածը Արդեն վերջինիս Ախալցխա-Ադիգենի հատվածում մեծ ծավալի են հասել մզկիթների և մուսուլմանական կենտրոնների շինարարական աշխատանքները Մզկիթաշինություն Սամցխեի տարածքում իրականացվում է Ադիգենի շրջանի, պայմանականորեն ասված, մեծ Ճելա (Չելա, Չեչլա, Չեչլյա), փոքր Ճելա (Ճեճլա, Չելա, Չեչլա, Չեչլյա) և Սաիրմե գյուղերի միջանկյալ/անտառապատ հատվածում՝ վերոնշյալ գյուղերի մահմեդական (աջար) բնակչության համար Հայտնի է, որ այս գյուղերում ապրել են 1944թ տեղահանված թուրք-մեսխեթցիները Վերջիններիս տեղերում ավելի ուշ հայտնվել են մահմեդական աջարները Մեծամասշտաբ այս մզկիթի շինարարությունն սկսվել է 2008թ սկզբներին, ավարտվելու է նույն թվականի տարեվերջին Տեղի բնակչությունը փաստում է, որ մզկիթը կառուցվում է Թուրքիայի, Վրաստանի և Աջարիայի Ինքնավար հանրապետության տրամադրած միջոցներով

[1] Դրանք Արջեւան-Սարվան, Գյոդակլար, Թեջիս, Չոլյան գյուղերն են

Միաժամանակ՝Ախալցխայի երկաթգծային կայանատեղիի հարևանությամբ գտնվող «Ապրանքային կայարան» կոչվող հայկական թաղամասի բնակիչները փաստում են, որ վերջիններիս համար գնված 12 տներից ութում արդեն ապրում են թուրք-մեսխեթցիների խոշոր ընտանիքներ Հայկական այս թաղամասում ևս ծրագրվում է մզկիթի հիմնում

Ըստ տարբեր ուսումնասիրությունների՝ ադրբեջանական ներկայությունը Սամցխեի արևմտյան մասում չի սահմանափակվում միայն կրոնական իմաստով Այստեղ վերջիններս ամրանալու փորձեր են անում նաև տնտեսական ներդրումներ կատարելու միջոցով

Շարունակվում է 1944թ տեղահանված թուրք-մեսխեթցիների՝ այս բնակավայրեր տեղափոխելու գործընթացը Եվրոպայի Խորհրդի առաջ դեռ 1999թ ստանձնած պարտավորությունների կատարման այս գործընթացը ևս Վրաստանն օգտագործում է իր՝ Սամցխե-Ջավախք-Ծալկայի հայաթափման ծրագրերում Թուրք-մեսխեթցիների լքած 120 գյուղերը, որոնցից 115-ը գտնվել են Սամցխեի տարածքում (մյուս 5-ը գտնվել են Ջավախքի տարածքում), ունեցել են հետևյալ ճակատագրերը 115 գյուղերից 65-ը ամայացել են, մնացած 50-ը վերաբնակեցվել են Իմերեթիայից (այժմ՝ նահանգ Վրաստանի արևմտյան մասում, բաղկացած է նախկին խորհրդային 11 շրջաններից,որի կենտրոնը Քութայիսի քաղաքն է) այստեղ բերված վրացիներով Այժմ, երբ վերաբնակեցման գործընթացը արդեն ընթացքի մեջ է, ոչ մի խոսք չի գնում վերոնշյալ 65 ամայի գյուղերի վերաշինման մասին, իսկ գնալով ավելացող վրացական զանգվածին վերոնշյալ մյուս 50 գյուղերից «տեղահանելու» մասին խոսելը ծիծաղելի է Հետևաբար, վերադարձող թուրք-մեսխեթցիների համար հանգրվանն են հանդիսանում տարածաշրջանի հետզհետե լքող հայերի բնակատեղիները

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ կառուցվող Թբիլիսի-Ծալկա-Նինոծմինդա-Ախալցխա-Բաթում

ավտոմայրուղին, որի բացակայությունը Վրաստանի Եվրոպական և եվրաատլանտյան կառույցներում ինտեգրման հարցերի պետական նախարար, փոխվարչապետ Գիորգի Բարամիձեն համարում է Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի գլխավոր չորս հիմնախնդիրներից մեկը[1], հանդիսանալու է Սամցխե-Ջավախք-Ծալկայի թյուրքացման «մայրուղիներից» մեկը, գուցե՝ գլխավորը Եթե մինչ այս նախագծի իրականացումը թյուրքացման և ՀՀ-ի շրջափակման գործը "վերապահված" էր տարածաշրջանակին կոմունիկացիաներին (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղի), և, որոնց դեմ հնարավոր էր բողոքարկել՝ համարելով դրանք թուրքադրբեջանական ծրագրեր, ապա այս դեպքում այդ հանքամանքը բացառվում է "Կառուցվող ավտոճանապարհը դա Վրաստանի ներքին ճանապարհ է" այս արտահայտության տակ Ադրբեջանն ու Թուրքիան ունեն իրենց հեռահար նպատակները քողարկելու մեծ հնարավորություն Վերջապես վերջիններիս կարծես թե հաջողվում է «քաղաքակիրթ» մեթոդներ գտնել՝ շրջափակելու ՀՀ-ն Այդ մեթոդը մի կրակոցով սպանում է մի քանի նապաստակներ Նախ՝ դրանով չի ընդվզում Սամցխե-Ջավախք-Ծալկայի հասությունը, ինչը չի կարելի ասել մնացած ծրագրերի՝ կոմունիկացիոն ուղիների գործարկման համար Հաջորդը՝ դրանով Թուրքիան և Ադրբեջանը «մաքուր են» և միջազգային հանրության, և, ինչ-որ իմաստով՝ ՀՀ-ի առջև. Այս ամենից բխող եզրակացությունն այն է, որ եթե ՀՀ-ն չօգտվի այս ճանապարհից (որը կալող է իրականանալ միմիայն Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հայությանն ուժեղացնելով և գործոն դարձնելով), ապա վերջինիս հյուսիսային հարևանը շուտով

---

[1] Մնացած երեք հիմնախնդիրները, ըստ Գ Բարամիձեի, էլեկտրաէներգիայի մատակարարման, գազաֆիկացման և չորրորդ հարցը Վրաստանի և Թուրքիայի միջև երկաթուղու կառուցումն է Փոխվարչապետի հավաստմամբ էլեկտրաէներգիայի մատակարարման հարցն արդեն լուծված է Տես http://www bagin info/default asp?Lang=_Am&NewsID=2115&SectionID=0&Date=12/03/2008&PagePosition=1

հնարավոր է Վրաստանի փոխարեն դառնա Թուրքիայի հետ սահմանային ակտիվ շփման մեջ հայտված Ադրբեջանը

2008թ օգոստոսյան վրաց-օսական պատերազմից հետո տարածաշրջանում կտրուկ բարձրացավ Վրաստանի կազմում գտնվող հայկական Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի նշանակությունը Վերջինս ամբողջովին ներքաշվեց անդրկովկասյան իրադարձությունների մեջ անփոխարինելի դառնալով մի շարք գործընթացներում Ցավալի է, սակայն փաստ, որ այդ ամենը ոչ միայն չեն ծառայելու, այլև դեմ են դուրս գալիս Սամցխե-Ջավախք-Ծալկայի իսկական տերերի հայության շահերին

ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Վահրամ ՄԻՐԱՔՅԱՆ

Մ Սահակաշվիլին Հարավային Օսեթիա վրացական բանակին ներխուժման հրաման տալուց մեկ ժամ առաջ հայտարարեց, թե հակամարտությունը պետք է լուծվի միայն խաղաղ ճանապարհով: Այսպես սկսվեց վրաց-օսական ռազմական բախման տեղեկատվական աջակցությունը ռազմական գործողությունների ընթացքում:

Կարծես՝ Վրաստանի հետ համաձայնեցրած գործեցին նաև արևմտյան և ամերիկյան ԶԼՄ-ները, որոնք օլիմպիական խաղերի մասին ռեպորտաժները դադարեցրին և անդրադարձան պատերազմին այն ժամանակ, երբ արդեն ռուսական զորքերը անցել էին հակագրոհի[1]:

Լոնդոնյան **The Times**-ը օգոստոսի 8-ին պատերազմին անդրադառնող իր հոդվածում Հարավային Օսեթիան անվանեց Վրաստանի տարածք, իսկ օսերին սեպարատիստներ, որոնց աջակցեց Ռուսաստանը, երբ Վրաստանը հարձակվեց ապստամբների վրա[2]:

The New York Times-ը նույնպես գում էր, թե Հարավայի Օսեթիան կոնֆլիկտային տարածք է, որտեղ ծաղկում է սեպարատիզմը և Վրաստանը ստիպված էր այնտեղ զորքեր մտցնել, որպեսի ապահովի իր անվտանգությունը Բացի այդ այստեղ Վրաստանի գործողությունները ներկայացվում են

Бомбардировка сознания http://www.vesti.ru/doc.html?id=199787&tid=60353

[2]"Психологическая война вокруг Осетии мифы и реальность" http //www dv-news com/main php?publication/view/112118

որպես պատասխան օսական ագրեսիային, որոնք առաջինն են սկսել կրակել վրացիների վրա·

The Washington Post իր խմբագրականում կոչ էր անում փրկել Վրաստանին՝ այդ նուրբ դեմոկրատական երկրին, Ռուսաստանի ճիրաններից· Այստեղ նշվում է, որ եթե Վրաստանին Ռուսաստանը ճնշի, դա նախադեպ կդառնա այլ հետսովետական հանրապետությունների համար:

Նման ոճով էին աշխատում նաև արևմտյան հեռուստաընկերությունները: BBC-ն իր լրատվականը պատերազմի երկրորդ օրը սկսում է հաղորդագրությամբ, թե ռուսական օդուժը ռմբակոծում է վրացական Գորի քաղաքը: Հեռուստակայանի լրագրողը տեղից հաղորդում է ռուսական հարվածների մասին:

Մեկ այլ անգլիական հեռուստաալիք՝ **Sky News**-ը, օգոստոսի 8-ին իր լուրերը սկսում է 7 վրացի վիրավորների և վրացական գյուղերի ռուսների ռմբակոծությունից: Միևնույն ժամանակ ցուցադրվում են կադրեր համազարկային կրակի վրացական կայանքներից, որոնք ռմբակոծում են Ցխինվալը[1]:

Տեղեկատվական պայքարում **Sky News**-ը թույլատրեց նաև բացթողումներ: Երբ հաղորդումներից մեկին հրավիրված 12 տարեկան օսուհին և նրա մորաքույրը ուղիղ եթերով հստակորեն ասեցին, թե Ցխինվալը ռմբակոծել են վրացիները իսկ իրենց փրկել են ռուսական զորքերը: Այդ պահին հաղորդավարի մոտ սկսվեց հազի նոպա և անմիջապես գովազդ դրվեց[2]

Սահակաշվիլին հակամարտության հենց առաջին օրը հարցազրույց տվեց CNN-ին և, ընդհանրապես, դարձավ

---

[1] В психологической войне все средства хороши
http //www vesti ru/doc html?id=199981

[2] http //www compromat ru/main/saakashvili/osetiafoxnews htm

արևմտյան ԶԼՄ-ի գլխավոր հյուրը: Նա նույնիսկ վրաց ժողովրդին ուղղված կոչերը արտասանում էր անգլերեն Եվրոմիության դրոշի ներքո[1].

Իսկ ռուսական ԶԼՄ-ը գերազանցապես խոսում էին վրացական ավերածությունների և վայրագությունների մասին, ինչպես նաև պարբերաբար անդրադառնում էին արևմտյան մամուլի վրացամետ դիրքորոշումներին և ապացուցում էին նրանց կողմնակալությունը. Դա էր ռուսական տեղեկատվական քաղաքականության հիմնական սխալը, որովհետև արևմտյան ԶԼՄ-ը հանդիսանում էին հսկայական զանգվածի կարծիքի ձևավորման աղբյուր, իսկ ռուս ԶԼՄ-ի կողմից դրանց ոչ օբյեկտիվության մասին հաղորդումները չէին հասնում նպատակին, որովհետև ազդեցություն չունեին արևմտյան ԶԼՄ ի ազդեցության տարածք· Դրան հակառակ՝ Սահակաշվիլին պարբերաբար ելույթ ունենալով արևմտյան ԶԼՄ-ով, ավելի արդյունավետ էր ազդում հանրային կարծիքի վրա:

Զինված պայքարի վերջից ռուսական կողմն էլ սկսեց պարբերաբար շփումը արևմտյան ԶԼՄ-ի հետ[2]: Սակայն արևմուտքի տեղեկատվական դաշտ ռուսական կարծիքի տարածման դեմ քայլեր էին արվում Սեպտեմբերի երեքին Վ Պուտինի հարցազրույցը գերմանական ARD հեռուստաալիքին մոնտաժվեց և «տհաճ» հատվածները հանվեցին Միայն բլոգերների բողոքից և համացանցում ամբողջական հարցազրույցի տարածումից հետո հեռուստաալիքի ղեկավա-

---

[1] http //www vesti ru/doc html?id=199787&tid=60353
Интервью Владимира Путина телекомпании CNN
http //www.vesti.ru/doc.html?id=204729&cid=1
Медведев разъяснил позицию России
http://www vesti ru/doc.html?id=204249&cid=1
Интервью Медведева телеканалу Евроньюс
http://www vesti.ru/doc html?id=206097&cid=1

ությունը խոստովանեց և պարտավորվեց ցուցադրել ամբողջական հարցազրույցը (առավոտյան ժամը վեցին)[1]

Հայկական հեռուստատեսությունները պատերազմը հիմնականում լուսաբանում էին ռուսամետ կամ էլ չեզոք, չնայած կային դեպքեր, երբ շատ մանրամասը լուսաբանվում էր արևմտյան և վրացի գործիչների հայտարարությունները, որոնք ընդգծված հակառուսական բնույթի էին (Արմենիա): Իսկ թերթերում վրացական տեսակետին ավելի շատ անդրադառնում էր ընդդիմադիր մամուլը:

Հակամարտության սկզբից Վրաստանի տարածքում արգելվեցին ռուսական հեռուստաալիքները և փակվեցին ռուսական կայքերը,[2] հետագայում ընդհանրապես փակվեց ինտերնետ կապը:

Վրաստանի կողմից քարոզչական հստակ քաղաքականությունը շարունակվեց ողջ հակամարտության ընթացքում. Երբ վրացական զորքերը մտան Ցխինվալ, անմիջապես նրանց մուտքը փառաբանող, հզորությունը ցուցադրող տեսահոլովակներ նկարահանվեցին և տարածվեցին, ստեղծեցին մեդիակենտրոններ, որոնք ռազմական գործողությունների մոտակայքից անընդհատ տեղեկատվություն էին տարածում Սահակաշվիլին սիստեմատիկ ելույթներ էր ունենում միջազգային լրատվամիջոցներով, դիպուկ համեմատությունների միջոցով ՌԴ գործողությունները զուգորդվում էր բացասական երանգավորում ստացած պատմական այլ դեպքերի հետ (Ավղանստան, Չեխոսլովակիա) և այլն[3]

---

[1] Вести net немецкая цензура и конец света для компьютеров
http://www.vesti.ru/doc.html?id=206344&cid=1
Граждан Грузии лишили доступа в Интернет
http //www.vesti.ru/doc.html?id=201005&cid=1
[3] Грузия проиграла войну с Россией но сумела выиграть войну",
http //www.inopressa.ru/times/2008/08/13/10 30 09/pr

Վրաստանին տեղեկատվական պայքարում աջակցում էին միջազգային խոշոր լոբբիստական խմբեր և PR կազմակերպություններ·

Scheunemann & Associates և Orion Strategies LLC ֆիրմաները, որոնց ղեկավարն է Ռենդի Շունեմանը (Randy Scheunemann) հաց պետության կողմից ստանում է պատվերներ[1]: Շունեմանը նախկինում աշխատել է «Իրաքի ազատության կոմիտեի» տնօրեն[2], որը ԱՄՆ-ի Իրաք ներխուժման լոբբինգով էր զբաղվում Շունեմանը նաև սենատոր Մաքկեյնի գլխավոր խորհրդականն է միջազգային հարաբերությունների գծով[3], Շունեմանը իր խոստովանմամբ աջակցում էր Վրաստանին ՆԱՏՕ մտնելու համար[4]: 2008-ի սկզբին նա հայտարարել է, թե այլևս չի աշխատում Վրաստանի համար, սակայն նրա ֆիրմաները շարունակում են գործել[5]:

Վրաստանի համար էր աշխատում նաև PR կազմակերպության՝ Aspect Consulting-ի աշխատակից Պատրիկ Վորմը (Patrick Worm)[6]: Այս կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Բրյուսելում: Պատրիկ Վորմը Թբիլիսիի կենտրոնի հյուրանոցի իր համարից պարբերաբար նյութեր էր ուղղարկում կենտրոն, որտեղից տարածվում էր ողջ աշխարհով:

Մի խումբ բելգիացի PR-իստներ հակամարտության սկզբից պարբերաբար այդ խնդիրներր լուսաբանող լրագրողներին էլեկտրոնային նամակներ էին ուղղարկում իրադարձությունների

---

[1] http //rawstory com/news/2008/WSJ McCain on defense over ties 0523 html
[2] http.//www sourcewatch org/index.php?title=Committee for the Liberation of Iraq
[3] http://rightweb.irc-online.org/profile/1347 html
[4] "Главный советник Маккеина работал на Грузию- СМИ
http //www.rian ru/world/20080809/150222401.html
[5] Շունեմանի մասին ավելի մանրամասը տես
http://ahousekeeper.livejournal.com/272710.html
[6] "Самый главный солдат Грузии PR-консультант Червь' шведская газета
http://www.regnum.ru/news/1043190.html

մասին տվյալներով՝ համապատասխան վրացական տեսակետի[1]:

Տեղեկատվական պատերազմի ցանցային կողմը

Բախման սկզբից պատերազմ սկսվեց նաև համացանցում, անմիջապես անհասանելի դարձավ Վրաստանի նախագահի, արտգործնախարարության, արդարադատության նախարարության, այլ նախարարությունների և մի քանի տեղական լրատվական կայքեր[2]:

Այդ պայմաններում Վրաստանի ԱԳՆ-ն ստեղծեց բլոգ, որի միջոցով էր տեղեկատվություն տարածում:

Օգոստոսի 12-ին մի շարք կայքեր արդեն հասանելի էին, վրացական իշխանությունները դրանք տեղափոխեցին Գերմանիա և ԱՄՆ[3]: Մ. Սահակաշվիլու կայքը տեղափոխվեց ԱՄՆ, Tulip Systems ամերիկյան կազմակերպության սերվերների վրա, սակայն գրոհները չդադարեցին:

Գրոհներ եղան նաև ռուսական, օսեթական և աբխազական կայքերի վրա (www.osradio.ru, www.cominf.org, www.osinform.ru, kommersant.ru, lenta.ru և այլն), սակայն լուրջ հետևանքներ չթողեցին[4]:

Երկկողմ հարձակումները հիմնականում տեղի էին ունենում այսպես կոչված DDoS (Distributed Denial of Service) գրոհների միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են մեծ քանակությամբ հարցումների միջոցով սերվերի խափանում: Հարցումներն ուղղարկվում են մի քանի տասնյակ հազար համակարգիչների

Грузия выиграла информационную войну с Россией с помощью пиарщиков из Бельгии"
http://og.ru/news/2008/08/13/41058.shtml
http://www.vesti.ru/doc.html?id=200221&cid=1

[3] Действительно ли Грузия подверглась российским кибератакам?',
http://www.inopressa.ru/lacroix/2008/08/13/16.17.48/cyber

[4] Война российских СМИ под шквалом DDoS-атак,
http://internet.crews.ru/news/top/index.shtml?2008/08/11/311614

կողմից, որոնց նախօրոք վարակում են վիրուսով: DDoSգրոհներ կարելի է պատվիրել, 24 ժամվա համար վճարելով մոտ 500 դոլարից սկսած[1]:

Վրաստանում ինտերնետ կապի մենաշնորհը CoucasusOnline ընկերությանն է պատկանում, որը արգելեց ինտերնետը ողջ Վրաստանի տարածքում անմիջապես ներքին գործերի նախարար՝ Եկատիրինա Զգուլադզեի այն հայտարարությունից հետո, թե Վրաստանում նկատվում են ապատեղեկատվության տարածման դեպքեր և քանի որ նման գործողությունները ռազմական դրության ժամանակ հանցագործություն են համարվում, իրավապահ մարմինները կանխարգելիչ միջոցառումներ կիրականացնեն[2]:

Որոշ ժամանակ անց միջազգային կազմակերպությունների ճնշման ներքո, որոնք վնասներ էին կրում Վրաստանում ինտերնետի բացակայության պատճառով, ինտերնետ կապը վերականգնվեց, սակայն արգելված մնացին ru դոմեյնով կայքերը և ռուսական հեռուստաալիքները:

Վրաց-ռուսական տեղեկատվական պայքարում տեղեկատվական հարվածներ եղան նաև հայերի ուղղությամբ: Օգոստոսի 9-ին ապատեղեկատվություն տարածվեց, թե Վրաստանի տարածքը ռմբակոծվում է ՀՀ-ի տարածքից թռած ինքնաթիռներով[3]: Անմիջապես ՀՀ ՊՆ կողմից հերքվեցին այդ լուրերը[4], որովհետև նման տեղեկատվությունը կարող էր Վրաստանի ներսում հակահայկական տրամադրությունների ալիքի պատճառ հանդիսանալ Բացի այդ խոսքը գնում էր Մառնեուլի շրջանի ռմբակոծման մասին, ինչը նաև նպատակ ուներ Ադրբեջանում

---

[1] Ավելի մանրամասը DDoS գրոհների մասին այստեղ
http //rian ru/science/20080813/150352160 html
Молчание грузин http://www.rosbaltsouth.ru/print/512868.html
[3]**"Грузия обвиняет Армению в помощи России", http://www.day az/print/news/georgia/127032.html**
[4] http //www mil am/arm/index php?page=2&p=0&id=617&y=2008&m=08&d=10

հակահայկական տրամադրությունների զարգացման առիթ դառնալ

Նման լուրերը հատկապես ադրբեջանական լրատվամիջոցների կողմից էին տարածվում: Ողջ հակամարտության ընթացքում նրանց կողմից Վրաստանում հակահայկական տեղեկատվական առիթի առաջացման մի քանի փորձեր եղան. Ավելի ուշ լրատվամիջոցներում լուրեր տարածվեցին, թե Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում ամերիկյան ռազմական փորձագետներով ինքնաթիռ է վայրէջք կատարել Այս ապատեղեկատվությանը նույնպես հայկական կողմից արագ հերքում հնչեց[1]:

Չնայած հայկական կողմի հերքումներին՝ ադրբեջանական ԶԼՄ-ը շարունակում էին նոր առիթներ գտնել հայկական կողմին մեղադրելու համար ,և դրանք երբեմն հասնում էին աբսուրդի: Օրինակ՝ օգոստոսի 12-ին ադրբեջանական Zerkalo պարբերականը գտավ մի գերազանց տեսողությամբ մառնեուլաբնակ ադրբեջանցու, որը Մառնեուլից նկատել էր, որ ռուսական ռմբակոծիչները թռչում են Գյումրիի տարածքից[2]: Ճիշտ է նման լուրերը քաղաքական գործիչների գործողությունների վրա որևէ ազդեցություն չթողեցին, սակայն հանրային կարծիքի վրա ազդեցություն, անպայման,կթողնեն:

Ի՞նչ հետևություններ կարելի է անել մեզ համար այս տեղեկատվական պատերազմի արդյունքներից.

1. Անհրաժեշտ է համագործակցություն միջազգային PR կազմակերպությունների հետ:
2. Առավելագույն անվտանգ մակարդակի հասցնել հայկական ցանցային ոլորտը:

---

[1] [illegible]
http //www.panorama am/am/politics/2008/08/12/mid/

[2] "САМОЛЕТЫ ЛЕТЕЛИ СО СТОРОНЫ ГЮМРИ" http://zerkalo az/print php?id=35089

3. Պարբերաբար համագործակցություն միջազգային ԶԼՄ-ների հետ:

4. Ներքին տեղեկատվական դաշտի անվտանգության ապահովում արտաքին ոչ բարենպաստ տեղեկատվական հոսքերից:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ և ԹՈՒՐՔԻԱՅԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Նաիրի ՀՈՒԽԻԿՅԱՆ

Հայ-թուրքական հարաբերությունները, կամ, ավելի ճիշտ, հակամարտությունը գալիս է բավական հեռվից: Շատ տեսաբաններ պնդում են, որ հակամարտության տեսքով հայ-թուրքական հարաբերություններն սկսվել են 1915թ. թուրքերի կողմից իրականացված Հայոց Ցեղասպանությանը միաժամանակ: Սակայն պետք է նշել, որ ցեղասպանությունից դեռ շատ առաջ հայ և թուրք հասարակություններն արդեն խնդիրներ ունեին իրար հետ, որն ուղեկցվում էր մշտական բախումներով:

Անդրադառնանք, սակայն, Հայաստանի պատմության նորագույն շրջանին և այդ համատեքստում՝ հայ-թուրքական հարաբերությունների լուսաբանմանը:

Այսպես, 2008թ. ամռանը տեղի ունեցած ռուս-վրացական քառօրյա պատերազմից հետո հարավկովկասյան տարածաշրջանում գործընթացներն սկսեցին ավելի արագ զարգանալ: Նույն համատեքստում արագացան նաև հայ-թուրքական հարաբերությունների զարգացումները: Արդեն սեպտեմբերի 6-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով Երևան ժամանեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը Երկու նախագահները միասին դիտեցին Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը: Ահա այդ օրվանից էլ հայաստանյան և թուրքական լրատվամիջոցներն ակտիվորեն սկսեցին մեկնաբանել երկու կողմերի հարաբերություններն ու երկու հասարակությունների

տրամադրվածությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման նկատմամբ:

Հայաստանում գրեթե բոլոր թերթերն ու հեռուստատեսությունները հաղորդեցին, որ ֆուտբոլային պարտությամբ սկսվել է Հայաստանի դիվանագիտական պարտությունների շարանը. Ընդդիմադիր կեցվածքով առանձնացող «Ա1+»-ը սեպտեմբերի 8-ին իր «Ճամպրուկները հավաքելու խորհուրդ» վերնագրով նյութում մասնավորապես նշեց, որ «Թուրքիայի եւ թուրքերի հետ էլ մենք երբեւէ չենք լինի բարեկամ»: Սեպտեմբերի 10-ին նույն լրատվամիջոցը տեղեկատվություն տարածեց ՀՅԴ Բյուրոյի արտահերթ լիագումար նիստի մասին, որտեղ նշվեց, որ Դաշնակցությունը կողմ է հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը, սակայն «բարիդրացիական հարաբերություններ կարող են հաստատվել Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչմամբ եւ հայ ժողովրդի իրավունքների վերականգնմամբ միայն. Առանց նախապայմանների շրջափակման վերացումը եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը այս ճանապարհի սոսկ առաջին քայլերը կարող են լինել»

Ընդհանրապես ընդդիմադիր հայացքներով առանձնացող այս լրատվամիջոցը սկզբնական շրջանում ոգևորված էր հայ-թուրքական հարաբերությունների, այսպես ասած, ջերմացմամբ Անգամ նյութեր հրապարակվեցին՝ արդարացնելով ժամանակի իշխանության քայլերը. Թուրքիայի արմատական թշնամի համարվող ՀՅԴ-ին, միևնույն ժամանակ, «Ա1+»-ը մեղադրեց քաղաքական ոչ ճիշտ հայացքներ ունենալու մեջ: Հասկանալի է, իհարկե, որ ընդդիմության խոսափող համարվող այդ լրատվամիջոցը պետք է փողփողեր թուրքերի հետ բարեկամության հաստատում (կամ ինչպես իրենք են նշում, բարեկամության վերականգնում), սակայն հետագա ժամանակաշրջանում, երբ իշխանությունները ևս անցան այդ ռազմավարության և, հետևաբար, առաջացրին հասարակության զայրույթը, նույն ընդդիմությունն անցավ այլ դիրքորոշման՝ պաշտպանելով «ոչ մի թիզ հող» սկզբունքը և կոչ անելով ճանաչել Հայոց Ցեղասպանությունը:

«A1+» լրատվամիջոցն այս համատեքստում ևս փոխեց իր հայացքները և արդեն հոկտեմբերի 10-ին հրապարակված «Երեք քայլ մինչև Հայաստանը կորցնելը» նյութում հեղինակը զրուցում է ՀՀ ՊՆ նախկին փոխնախարար Վահան Շիրխանյանի հետ, որը հայտնի է իր հիշ-ական գործերով:

«Ընդամենը մի քանի ամիս առաջ Վարդան Օսկանյանը Թուրքիային խնդրում եւ աղաչում էր, թե ինչո±ւ եք ուզում կառուցել Կարս-Ախալքալաք երկաթուղին, կա Կարս-Գյումրին, ուզո±ւմ եք Բաքու, Թբիլիսի գնալ, եկեք, գնացեք, մենք ձեզանից ոչինչ չենք ուզում, ձրի երթեւեկեք մեր տարածքով¦,-Վահան Շիրխանյանի խոսքերը փոխանցում է լրատվամիջոցը և շեշտում, որ Արցախյան հակամարտությունում հայկական կողմն առաջին հերթին պարտվել և շարունակում է պարտվել Թուրքիայի կողմից, որն էլ Ադրբեջանի առաջին և գլխավոր դաշնակիցն է:

«ԼՂ հիմնախնդրում ամենամեծ դավաճանությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 27-ի ռճրագործությունից հետո, երբ նոյեմբերին Ստամբուլում Ռոբերտ Քոչարյանը փաստաթուղթ ստորագրեց, որով ընդունեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Այնուհետեւ շրջանառության մեջ մտավ օկուպացված տարածքներ տերմինը: Նրանք դավաճանությունը փորձում էին ծածկել դիվանագիտական գաղտնիքը պահպանելու պատրվակով»,-գրում է պարբերականը:

Պարզ է, իհարկե, որ նման հրապարակումներն առաջին հերթին հետապնդում են ոչ թե օբյեկտիվորեն մեկնաբանելու հայ-թուրքական հարաբերությունների զարգացումն ու նրբությունները, այլ հայաստանյան հասարակությանը տրամադրելու իշխանությունների դեմ՝ անկախ նրանց քաղաքական հայացքների ճշմարտացիությունից:

Միաժամանակ պարբերականը նշում է, որ Հայաստանը երբևէ չի զբաղվել տեղեկատվական քարոզչությամբ և հայ հասարակության մեջ չի պրոպագանդել ազատագրված հայկա-

կան տարածքների նշանակությունը, դրա համար էլ հիմա երբ խոսք է գնում դրանք ադրբեջանցիներին հանձնելու մասին, հայաստանցիները հիվանդագին չեն պատասխանում, ընդհակառակը՝ անգամ կողմ են արտահայտվում: Մասնավորապես, այսպիսի մի պարբերություն կա նյութում. «Հայաստանն այնքան չաշխատեց ինֆորմացիոն պատերազմում, եւ Ադրբեջանն ու Թուրքիան այնքան աշխատեցին, որ համաշխարհային հանրությանը կարողացան ապացուցել, որ Հայաստանը ագրեսոր է: Վերջին տարիների միջպետական հարաբերությունները այս սկզբունքի վրա են, եւ այսօր Ադրբեջանը նույնիսկ ՌԴ-ի հետ է տնտեսական լուրջ հարաբերություններ ձեւավորել»:

Հետաքրքիր է, սակայն, որ ՀՀՇ իշխանության տարիներին Թուրքիայի հետ բարեկամության կոչերով հանդես եկող լրատվամիջոցը և դրանով ամենահաճախ խոսող քաղաքական գործիչ Վահան Շիրխանյանը հիմա ասում է, թե «եթե այս հանցավոր իշխանությանը հաջողվի բարեկամական հարաբերություններ ստեղծել Թուրքիայի հետ, սահմանի բացում, ազատագրված հողերի վերադարձ, ապա՝ մենք ի՞նչ երկիր ենք թողնելու մեր երեխաներին»·

ՀՅԴ քաղաքական հայացքները պաշտպանող և այդ կուսակցությունից աջակցություն ստացող մեկ այլ լրատվամիջոց՝ «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը նույն այդ համատեքստում հանդես է գալիս բոլորովին ուրիշ դիրքերից և շեշտում թուրքերի նկատմամբ պահանջատիրական դիրքորոշման անհրաժեշտությունը· Գյուլի այցի օրը՝ սեպտեմբերի 6-ին, Դաշնակցությունը բողոքի ակցիաներ էր կազմակերպել Թուրքիայի նախագահի ողջ երթուղով և այն լուսաբանվում էր մեր նշած հեռուստատեսությամբ. «Հայաստան այցի հիշողությունները Թուրքիայի նախագահի մոտ կուղեկցվեն այս հայացքներով, որ անկասկած, ավելին են ասում, քան տարիներ շարունակվող բանակցությունները ամբողջ պերճախոսությամբ»:

Պետք է նշել, որ հայկական լրատվամիջոցները Թուրքիայի նախագահի հայաստանյան այցի ողջ ընթացքում հայտնվել էին բարիկադների երկու կողմերում: Ոմանք անկեղծ ուրախանում էին Գյուլի երևանյան այցից, իսկ ոմանք էլ ընդհակառակը՝ հնարավոր բոլոր միջոցներով փորձում էին նսեմացնել վերջինիս այցի նշանակությունը հայ-թուրքական հարաբերությունների գործում: Արդարության համար, սակայն, պետք է նաև նշել, որ ավելի ճիշտ էին, թերևս, երկրորդ թևի լրատվամիջոցները, որոնք պնդում էին, թե Թուրքիան չի կարող Հայաստանի հետ անկեղծ հարևանություն և առավել ևս բարեկամություն անել, քանի որ մենք պանթուրքիստական իրենց ծրագրերի գլխավոր խոչընդոտն ենք, բացի այդ թշնամական հարաբերությունների մեջ ենք թուրքերի ռազմավարական դաշնակից և նաև կրտսեր եղբայր Ադրբեջանի հետ: Եվ ամենագլխավորը՝ տարածքային պահանջներ ունենք Թուրքիայից: Այս պայմաններում, իհարկե, ճիշտ դիրքերից հանդես եկավ «Երկիր մեդիան»՝ սեպտեմբերի 6-ի երեկոյան թողարկմանը նշելով, թե բարեկամություն անելու համար «թուրք հասարակությունը պետք է վերարժևորի իր անցյալը»: Միևնույն ժամանակ հեռուստասեության եթերով ՀՅԴ ԳՄ անդամ Լևոն Մկրտչյանը նշեց. «Մեր ժողովուրդների հետագա համատեղ գոյատեւումն անհնար կլինի, եթե ժողովուրդներն ուժ չգտնեն ճիշտ արժեւորելու անցյալը: Դա և Ցեղասպանության փաստի ճանաչումն է հասարակության կողմից, և խորքային խնդիրներն ընդունելու եւ լուծելու կամքը»:

Միևնույն ժամանակ հեռուստատեսությունը փորձում է գնահատել հայ-թուրքական հարաբերությունները Թուրքիայի ռազմաքաղաքական հետաքրքրությունների տեսանկյունից: Մասնավորապես, լրատվամիջոցի գնահատմամբ Հարավային Կովկասում Թուրքիան կորցրել է իր ռազմավարական օբյեկտների մեծ մասը, որոնք տեղակայված էին Վրաստանի տարածքում: Պատճառն, իհարկե, ռուս-վրացական քառօրյա պատերազմն էր: Ու քանի որ տարածաշրջանում Ռուսաստանն է փորձում վերականգնել դիրքերն ու հեղինակությունը, ԱՄՆ-ն

նույնպես պիտի պայքարի տարածաշրջանում դիրքեր հաստատելու համար· ԱՄՆ-ից առաջ Թուրքիան է ընկել, և ինչպես նկատում է լրատվամիջոցը, «Թուրքիան տարածաշրջանում վարում է ինքնուրույն, առանց ԱՄՆ մասնակցության քաղաքականություն»:

Հասկանալի է, իհարկե, որ ԱՄՆ-ից զատ արտաքին-տարածաշրջանային քաղաքականություն թուրքերը ձգտում են վարել իրենց իսկ առաջարկած «Կովկասյան պլատֆորմի» միջոցով, որին, ի դեպ, դրական է արձագանքել Հայաստանը ևս: Այս առիթով «Երկիր մեդիան» արձանագրում է, որ պլատֆորմի նախաձեռնության մասին ԱՄՆ-ի հետ խորհրդակցություն չի եղել, ավելին, ԱՄՆ-ն ընդգրկված չէ ձեւաչափում՝ հակառակ 1999 թվականի նույն առաջարկության: Մյուս կողմից, Վրաստանում պատերազմի հետեւանքով Ռուսաստանն ուժեղացրեց տարածաշրջանում դիրքերը, ինչը նշանակում էր նաեւ Թուրքիայի դիրքերի թուլացում:

ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանի հետ զրույցում հեռուստատեսությունը փաստում է «Թուրքիան կորցնում է դիրքերը Հարավային Կովկասում Մի կողմից Ադրբեջանն է ստիպված Ռուսամետ քաղաքականություն իրականացնել, մյուս կողմից այն ռազմական ենթակառուցվածքները, որոնք Վրաստանում կան Թուրքիայի օգնությամբ, որի վրա Թուրքիան ծախսել էր 40 մլն դոլար, հիմնականում ոչնչացվել է, փաստորեն, Թուրքիայի դիրքերը թուլացել են նաեւ Վրաստանում: Այս առումով Թուրքիան առաջ քաշելով նախաձեռնություն պլատֆորմի վերաբերյալ, փորձում է նոր իրադրության մեջ Ռուսաստանի հետ համատեղ իր համար դիրքեր ապահովել մեր տարածաշրջանում՝ աշխարհաքաղաքական առումով»: Սակայն հեռուստատեսության մեկնաբանը նաև շեշտում է, որ Թուրքիան լավ չի պատկերացնում իր առաջարկած պլատֆորմի բուն էությունը, քանի որ այն կարող է դառնալ ոչ թե Թուրքիայի տարածաշրջանային վերահսկողության գործոն, այլ

օգտագործվել ԱՄՆ-ի կողմից, որի հետևանքով թուրքերը լիովին դուրս կմնան Կովկասից

Ընդհանուր առմամբ եթե դիտարկենք հայկական երկու լրատվամիջոցների հրապարակումները հայ-թուրքական հարաբերությունների զարգացման նորագույն շրջանը, ապա բավական նկատելի մի պատկեր կերևա, որտեղ հստակ տարանջատվում են երկու ծայրահեղություններ՝ հհշ-ական թուրքամետ և հյդ-ական թուրքատյաց:

2008թ. նոյեմբերի 2-ին Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ստորագրած Մոսկովյան հռչակագրից հետո լրատվամիջոցներն ավելի ակտիվորեն հանդես եկան հատկապես հայ-թուրքական հարաբերությունների և երկխոսության հարցերով: Մասնավորապես, «Ա1+»-ը փաստեց, որ «Հայաստանն ուզում է օր առաջ կնքել համաձայնագիր»: Խոսքն, իհարկե, գնում էր Արցախի հակամարտության շուրջ համաձայնագրի կնքման մասին, որն իր հերթին ենթադրում է հայ-թուրքական հարաբերությունների բարելավում՝ Թուրքիայի խոստմամբ: Ինչ խոսք, լրատվամիջոցի մոտեցումը լիովին համապատասխանում է իր և իր վերահսկող կուսակցության քաղաքական հայացքներին՝ բարեկամանալ թուրքերի հետ և բացել սահմանները, եթե պետք է, զոհելով նաև Արցախը: Ի դեպ, պարբերականում հենց՝ այդ միտքն էլ արտահայտվում է, թե «ղարաբաղցիները գրավել են ամբողջ Հայաստանը, կարող ենք հանձնել Ղարաբաղը»:

Իսկ ահա «Երկիր մեդիան» նշում է, որ Ադրբեջանն ու Թուրքիան պատրաստվում են քննության առնել Հայաստանի նկատմամբ իրենց քաղաքականությունը· «Թուրքիան ամեն կերպ աջակցում է Ադրբեջանին, և եթե մենք գնանք թեկուզ աննշան զիջումների, ապա կկորցնենք Արցախում տարած հաղթանակն ու հետագա այլ հաղթանակների հնարավորությունը»,-նշում է հեռուստատեսության մեկնաբանը՝ միաժամանակ փաստելով, որ Թուրքիան արցախյան խնդրի կարգավորման հարցում

միջնորդ լինել չի կարող, քանի որ ի սկզբանե պաշտպանել է Ադրբեջանի դիրքորոշումը: Թուրքիայի միջնորդությունն, ըստ էության, բացառում է նաեւ Մայնդորֆյան հռչակագիրը:

Իրենց հերթին թուրքական կողմի լրատվամիջոցները հարցին անդրադառնում են՝ ամենևին ուշադրություն չդարձնելով Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը՝ դիտարկելով այն որպես երկրորդական կարևորության հարց: Ի տարբերություն հայկական ընդդիմադիր ու արմատական հակաթուրքական լրատվամիջոցների, որոնք Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման առաջնային տեղում տեսնում են ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դրա հետևանքների վերացումը, և ապա՝ սահմանների բացումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, թուրքական լրատվամիջոցները փողփոդում են այն միտքը, թե Հայաստանը շատ է ոգևորվել Թուրքիայի հետ բաց սահմաններ ունենալու գաղափարից և ամեն զիջման պատրաստ է հանուն դրա: «Հուրիեթ» պարբերականն, օրինակ, 2008թ. սեպտեմբերի 11-ին գրում է, որ Հայաստանն այսօր տնտեսական շրջափակման մեջ է, և նրան օդ ու ջրի պես անհրաժեշտ է բաց սահմաններ ունենալ Թուրքիայի հետ: «Եթե մենք այսօր ավելի սկզբունքային լինենք և հայերից պահանջենք ցամաքային տարածք հանձնել Ադրբեջանին, որը կմիացնի Նախիջևանը Ադրբեջանի Հանրապետությանը, հայերը կգնան այդ քայլին էլ հանուն նրա, որ կարողանան Թուրքիայի միջոցով շնչել եվրոպական օդը»,- հպարտորեն գրում է թերթը: Ընդհանրապես «Հուրիեթի» հրապարակումներից կարելի է կարծել, թե Հայաստանում բոլորը սոված են ու անհամբեր սպասում են թուրքերի բարեհոգությանը: Երևի նաև դա է պատճառը, որ թուրքական մեկ այլ պարբերական՝ «Սաբահը», ամենից առաջ պատմում է հայկական հին ավտոմեքենաների ու կիսափուլ շենքերի մասին և հավատացնում, որ Թուրքիան մեծ շնորհ կանի Հայաստանին, եթե համաձայնի նորմալ հարաբերություններ հաստատել:

Պարզ է, իհարկե, որ թուրքերի լրատվական համակարգում գործում է հստակ ծրագրավորված քարոզչական ռազմավարություն, որի նշագծված ուղով են գնում թուրքական բոլոր լրատվամիջոցներն անխտիր: Եվ ինչպես նրանք աղրբեջանցիներին սովորեցրել են ամեն օր «տեղեկատվություն» տարածել այն մասին, որ հայկական զինված ուժերը շփման գծի որոշակի հատվածներում հարձակում են գործել աղրբեջանական բանակի վրա, նույն ռազմավարությամբ էլ հենց իրենք՝ թուրքերն են ամեն օր տեղեկատվություն մատակարարում աշխարհին, թե Հայաստանում սով է, ու մարդիկ ապրում են համատարած աղքատության ու անգրագիտության պայմաններում: Հայ-թուրքական հարաբերությունների մասին էլ իրենց ռազմավարությանը հավատարիմ՝ թուրքական թերթերն ու հեռուստատեսությունները խոսում են լոկ այն տեսանկյունից, որ հայկական կողմը պարզապես աղաչում է իրենց բարելավել հարաբերությունները: Դա, իհարկե, բավական նպաստավոր ու աշխատող քարոզչական տարբերակ է թուրքերի համար, սակայն հայկական լրատվական համակարգի նորմալ և կանոնավորված աշխատանքի դեպքում շատ արագ հնարավոր կլինի ոչ միայն արժանի հակահարված տալ թուրքերի կազմակերպած տեղեկատվական այդ գրոհներին, այլև լիովին կազմալուծել նրանց աշխատանքը: Խնդիրը նրանում է, որ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման վերջին, նորագույն շրջանում թուրքերը չեն մշակել խորապես ուսումնասիրված և ուժեղ ռազմավարական-քարոզչական ծրագիր: Ամենևին չհակասելով վերևում այլ բանի մասին խոսող մտքիս՝ պիտի նշեմ, որ թուրքերը մեր մասին մտածում են այնպես, ինչպես քիչ վերև ներկայացրել էր «Սաբահ» պարբերականը՝ համատարած աղքատություն ու անգրագիտություն: Հետևաբար, թուրք լրագրողները նաև ջանքեր չեն թափում հայերի դեմ տեղեկատվական խոշորածավալ արշավ կազմակերպելու համար միևնույն է, ամեն դեպքում հայերը պարտվելու են·

Այս համատեքստում հայկական կողմը ոչ թե թերանում է կամ լավ չի կատարում իր գործը, այլ ընդհանրապես ոչինչ չի անում: Չկան համակարգված աշխատանքներ, լրատվամիջոցների և լրագրողների ասածները չեն համապատասխանում այլ լրատվամիջոցների ասածներին, միաժամանակ հաճախ լրատվության այդ նույն միջոցները պայքարում են ոչ թե ընդհանուր հակառակորդի՝ տվյալ դեպքում Թուրքիայի լրատվական համակարգի դեմ, այլ փորձում են իրար տակ փորելով լսարան պոկել իրարից: Համոզված ենք, սակայն, եթե Հայաստանում լինի կազմակերպված և համակարգված լրատվական-քարոզչական ռազմավարական ծրագիր, և հայկական լրատվամիջոցներն աշխատեն այդ ծրագրի կետերով (իհարկե, դրանց նրբությունները համապատասխանեցնելով իրենց լրատվամիջոցների որդեգրած սկզբունքներին), ապա կարճ ժամկետում հայ-թուրքական հակամարտային հարաբերություններում մենք կարձանագրենք ակնհայտ գերադասելի և դրական դիրք, ինչը միանշանակ կապահովվի տեղեկատվական պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ:

C A U C A S U S
M O U N T A I N S
C A U C A S I A
Bezar Dysu
4460 m
(14,698 ft)
Aragats
(13,419 ft)